

# **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ**

**Աննա Տարիելի Կնյազյան**

**ԱՆԳԻՒԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ  
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ  
(Լեզվական և հանրամշակութային  
դրսերրումներ)**

Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում:

Գիտական խորհրդատու՝

բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ք.Գասպարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆեսոր Կ.Շ. Աբրահամյան  
բ.գ.դ., պրոֆեսոր Շ.Հ. Պարոնյան  
բ.գ.դ., դոցենտ Ն.Լ. Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվահասարակագիտական համալսարան:

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. մարտի 30-ին, ժամը  
11.00-ին, Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ»  
մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի  
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. փետրվարի 29-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
բ.գ.դ., պրոֆեսոր՝

Դ. Հրշեցյան Ե. Լ. Երգնևյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մարդկանց ախօրյա կյամքը, իրադարձությունների և գործողությունների գնահատումը, անհատի դերային դիրքորոշումները պայմանավորված են գենդերային փոխհարաբերություններով:

Գենդերը (սոցիալական կամ հանրամշակութային սեռը) լեզվաբանական կարգ չէ, սակայն դրա բովանդակությունը կարելի է բացահայտել լեզվական կառույցների վերլուծության միջոցով:

Աշխատանքում հետազոտության **օբյեկտը** անգլիական երգիծական խոսույթն է՝ զգացնունքների լեզվական արտահայտության գենդերային առանձնահատկությունների դիտանկյունից: Ընտրությունը պայմանավորված է ժամանակակից լեզվաբանության մեջ նախադեպային ժանրի տեքստերի հանրամշակութային առանձնահատկությունների նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճով:

Սույն ատենախոսության մեջ որպես հետազոտության **առարկա** քննության են ենթարկվում անգլիական «կենցաղային» անեկդոտներում գենդերային կարծրատիպերի հանրամշակութային առանձնահատկությունները, որոնք արտացոլում են արականության և իգականության վերաբերյալ սոցիալական պատկերացումները: Աստենախոսության հետազոտության **առարկա** են նաև կանանց և տղամարդկանց խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային տարրերությունները անգլիական «կենցաղային» անեկդոտներում:

Գենդերային կարծրատիպերի հանրամշակութային առանձնահատկությունների հետազոտության լեզվական **նյութը** կենցաղային թեմատիկայով անգլիական անեկդոտներն են: Անեկդոտների տեքստերի բովանդակության վերլուծության հիման վրա վեր են հանվել թեմաներ, որոնցում արտացոլված են կանանց և տղամարդկանց բնորոշ գծերի կամ գործողությունների վերաբերյալ ամենատարածված կարծրատիպային պատկերացումները, ինչպես նաև անգլիական «կենցաղային» անեկդոտներում խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային մակարդակներում առանձնացվել են հոլոգարտահայտչական նշույթները: Վերլուծության են ենթարկվել ավելի քան 1000 անգլիական «կենցաղային» անեկդոտներ: Նյութի ընտրությունը կատարելիս հաշվի են առնվել հույգեր արտահայտող այն տարրերը, որոնք համապատասխանում են մեր հետազոտության մեջ բարձրացվող հիմնախնդիրներին:

Հետազոտության **նպատակը** հաղորդակցմանը մասնակից հոլոգագացական անհատի՝ անգլիական երգիծական խոսույթում արտահայտված գենդերային տարրերությունները վեր հանելն է: Սույն աշխատանքի շրջանակներում իրականացվել է անգլիական անեկդոտների հանրամշակութային վերլուծություն՝ նպատակ ունենալով բացահայտել

սոցիալական բնույթի և աշխարհի լեզվական պատկերի այն յուրահատկությունները, որոնց հիմքում ընկած են գենդերային կարծրատիպերը:

Հետազոտության ընդհանուր նպատակով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Բացահայտել «գենդեր» գիտական հասկացության էությունը, դրա բովանդակությունը, գենդերային լեզվաբանության առանձնահատկություններն ու ժամանակակից ուղղությունները: Վերլուծել գենդերային լեզվաբանության կայացման ընթացքը լեզվի մասին գիտության ընդհանուր զարգացման համատեքստում:

2. Գոյություն ունեցող մոտեցումների և հետազոտական ընթացակարգերի հիման վրա առաջարկել լեզվաբանական ուղղվածություն ունեցող նմուշ-օրինակներ, որոնք ներկայացնում են գենդերը՝ որպես հանրամշակութային կառուցատար:

3. Բացահայտել անեկդոտի՝ որպես զանգվածային մշակույթին հարող երևույթի առանձնահատկությունները, վերլուծել անեկդոտը որպես հաղորդակցային գործընթաց, որպես նախադեպային երգիծական տեքստ, որտեղ արտացոլվում են ազգային խառնվածքի յուրահատկություններն ու արժեհամակարգը:

4. Վեր հանել անգլիացիների պատմամշակութային զարգացման յուրահատկությունները, որոնք պայմանավորված են անգլիական «կենցաղային» անեկդոտներում արտացոլվող աշխարհի լեզվական պատկերի ազգային առանձնահատկություններով:

5. Ուսումնասիրել անգլիական «կենցաղային» անեկդոտների գենդերային կարծրատիպերի առանձնահատկությունները: Պարզել դրանց ձևավորման վրա ազդող սոցիալական պայմանները: Վեր հանել գենդերային հայեցակերպի իրականացման լեզվամշակութային առանձնահատկություններում:

6. Դիտարկել տղամարդ և կին հաղորդակցվող անհատների հուզազգացական վարքի դիմանմիկան անգերենում: Պարզել անգլիական երգիծական խոսույթում կանանց և տղամարդկանց հուզազգացական վարքի գերակշռող հուզերը բառային և շարահյուսական մակարդակներում:

7. Վեր հանել կանանց և տղամարդկանց հարախոսքային և ոչ խոսքային վարքի տարրերությունները երգիծական խոսույթում:

Հետազոտության արդիականությունը և կարևորությունը պայմանավորված են այն հանգանանքով, որ հատկապես վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում բավական շատ է արժարժվում «գենդեր» եզրույթը, քանի որ գենդերային հարաբերությունների ներդաշնակ զարգացումը դիտվում է որպես ընդհանուր ժողովրդավարացման գործընթացի մաս: Աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական բնույթի փոփոխությունների հետևանքով խորանում է գենդերային հարաբերությունների

անհամաշափությունը հասարակական լյանքում, որն էլ իր դրսերումն է գտնում քաղաքական, իրավական, հոգեբանական, տնտեսական, սոցիալական, մշակութային, լեզվական և այլ ոլորտներում: Ուստի գեներային տարբերությունների ուսումնասիրության խնդիրը առավել արդիական է դաշնում, քանի որ գեներային հավասարության մոտեցման պահպանումը կարևոր է հասարակական լյանքի բոլոր բնագավառների զարգացման համար: Գեներային հարաբերությունները թափանցում են մշակույթի, լեզվի, սովորույթների, հասարակական կառույցների, պետական ինստիտուտների որոշումների կայացման մեջ և ծևավորում հասարակական կարծրատիպեր: Հետազոտության արդիականությունը նաև պայմանավորված է գեներային գիտելիքների տարածման, գեներային կարծրատիպերի հաղթահարման, գեներային իրավիճակի ձգրիտ արտացոլման, երգիծական խոսույթում կանանց և տղամարդկանց կերպարներին ներկայացված առանձնահատկությունները բացահայտելու անհրաժեշտությամբ:

Սույն ատենախոսության նորույթը երեք գիտակարգերի՝ հանրամշակութաբանության, կառուցվածքային և գեներային լեզվաբանության գուգարդի հենքի վրա լեզվաբանական հետազոտություն իրականացնելու է: Հետազոտությունը մի կողմից վերաբերում է գեներային լեզվաբանությանը, որը գտնվում է լեզվաբանական հետազոտությունների կենտրոնում և որի արդիականությունը նախ և առաջ որոշվում է լյանքում և հասարակության մեջ գեներային հարաբերությունների փոփոխություններով, ինչպես նաև այս կամ այն ծևով այդ հարաբերությունների լեզվական առկայացման յուրահատկությունները պարզելու անհրաժեշտությամբ: Մյուս կողմից սույն ուսումնասիրությունը ընդգրկում է խոսույթի տեսության ոլորտը, որը նոյնպես գտնվում է ժամանակակից լեզվական հետազոտությունների հետաքրքրության շրջանակներում: **Նորույթ** է նաև՝ լեզվական ընդգրկուն նյութի հիման վրա հաղորդակցմանը մասնակից հոլովագացական անհատի գեներային բնորոշ գերը անգիտական երգիծական խոսույթում վեր հանելը, խոսքի վրա հանրամշակութային հասկացույթի ազդեցության ընդհանուր օրինաչափությունները բացահայտելը և խոսքի բովանդակության հոլովարտահայտչական ուղղվածությունը գեների դիտանկյունից քննելը: **Նոր** է նաև հաղորդակցության ոչ խոսքային և հարախոսքային բաղադրիչների ուսումնասիրությունը՝ անգիտական երգիծական խոսույթում գեներային հայեցակերպի հաշվառումով:

Առաջին անգամ աշխատանքում քննության են առնվում գեներային կարծրատիպերը անգիտական «կենցաղային» անեկդոտներում: Լեզվաբանության մեջ «կենցաղային» ամեկդոտը հիմնականում ուսումնասիրվել է ժամանակին յուրահատկությունների և լեզվական միջոցների կիրառման տեսանկյունից, սակայն ուսումնասիրությունից մինչև այժմ դուրս են մնացել գեներային կարծրատիպերի հանրամշակութային առանձնահատկությունները:

Ժամանակակից լեզվագենդերաբանության մեջ անգլիական երգիծական խոսույթի նյութի հիման վրա լեզվական գենդերային տարբերակման ոլորտում մինչև այժմ ուսումնասիրություններ չեն իրականացվել: Թեև Արևմուտքում գենդերային հետազոտությունները, լայն առումով, արդեն հաստատում տեղ են գրավել գիտաճյուղերի շարքում, սակայն Հայաստանում դրանք համեմատաբար նոր գիտահետազոտական բնագավառ են: Լայն առօրմով լեզվի և հաղորդակցության գենդերային հայեցակերպը դեռևս մնում է ամենաքիչ ուսումնասիրված բնագավառը գենդերային հետազոտությունների ընդհանուր միջգիտակարգային ոլորտում: Սույն աստենախոսությունը կնպաստի գենդերային լեզվաբանական հետազոտությունների զարգացմանն ընդհանրապես և Հայաստանում մասնավորապես:

Աշխատանքի տեսական նշանակությունը պայմանավորված է գենդերային կարծրատիպերի վերաբերյալ գիտական պատկերացումները խորացնելու և համակարգելու կարևորությամբ: Գենդերային հայեցակերպը լրացուցիչ հստակություն է մտցնում այն հարցում, թե հանրամշակութային բնութագրերով պայմանավորված՝ ինչպես են գործածվում լեզվական միջոցները: Ստացված արդյունքները կարող են նպաստել լեզվի մարդակենտրոն բննության, հանրամշակութաբանության, լեզվամշակութաբանության, գենդերային տեսության, հաղորդակցության տեսության հետազա զարգացմանը:

**Հետազոտության գործնական նշանակությունը:** Աշխատանքի արդյունքները հետաքրքրություն են ներկայացնելու հանրամշակութաբանության, հանրալեզվաբանության, գործարանության, հոգելեզվաբանության, կոնֆլիկտաբանության հանար. դրանք հնարավորություն են ընձեռում առավել ճշգրիտ պատկերացնելու ժամանակակից լեզվագիտության նոր ուղղության՝ գենդերային լեզվաբանության բավականին խայտարդետ պատկերը և կարող են լայն կիրառություն գտնել տարբեր գիտահետազոտական ուսումնասիրություններում, այս թեմային առնչվող ավարտական և մագիստրոսական աշխատանքներում: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել նաև ընդհանուր լեզվաբանության, հոգեբանության, միջմշակութային հաղորդակցության, քրեագիտության, գենդերային հետազոտությունների հատուկ դասընթացներում:

Հետազոտության առարկայի առանձնահատկությունը, նպատակների ու խնդիրների համալիր բնույթը պահանջում են կիրառել տարատեսակ մեթոդներ: Լեզվական նյութի վերլուծության և արդյունքների ներկայացնան համար հիմնականում կիրառվել են հանրամշակութաբանության, հանրալեզվաբանության, վիճակագրական մշակման, ինչպես նաև նկարագրական և գուգարդական վերլուծության մեթոդները՝ իրենց հիմնական բաղադրիչներով (դիտարկում, ընդհանրացում, մեկնաբանում, դասակարգում):

Աստենախոսության մեջ արված եզրակացնությունների հավաստիությունը ապահովվում է հետազոտման համալիր մեթոդների կիրառմաբ, քննվոր

հիմնախնդրին վերաբերող ընդգրկում տեսական նյութի լուրջ մշակվածությամբ, կատարված խորը և բազմակողմանի վերլուծությամբ, ինչպես նաև ծավալուն լեզվական նյութով:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը** գենդերաբանության և հանրամշակութաբանության ոլորտում առաջատար հետազոտողների ուսումնասիրություններն են.

• ֆեմինիստական և գենդերային լեզվաբանության ոլորտում՝ Ռ. Քեմերոն, Ռ. Լակոֆ, Դ. Տաննեն, Օ. Յեսպերսեն, Պ. Տրաջի, Հ. Կոտիհոֆ, Ա. Վ. Կիրիլիհնա, Ի. Խալեևա, Օ. Լ. Կամենսկայա, Մ. Վ. Գորոդնիկովա, Ի. Ա. Ստեռնին և այլք:

• հանրամշակութաբանության ոլորտում՝ Ու. Լիպման, Վան Շեյկ, Հ. Թեջֆել, Զ. Թերներ, Ս. Լ. Բեմ, Ա. Վ. Իգլի, Է. Օյկլի, Ֆ. Մաուտներ, Մ. Միդ, Վ. Լարով, Ա. Ս. Խոլոդ, Յ. Ա. Գրիցենկո և այլք:

Համալիր մոտեցման մշակումն ու իրականացումը թույլ է տալիս աշխատանքում ձևակերպել լեզվում գենդերային գործուն ուսումնասիրող գիտական ուղղության ընդհանուր տեսական հիմունքները և առաջարկել գենդերային տարրերությունների լեզվաբանական ուսումնասիրության նոր մեթոդաբանություն, որը կարող է հիմք դառնալ ոչ միայն երգիծական խոսքի գենդերային լեզվաբանական հետազոտության, այլև տարաբնույթ խոսության ըննության համար գենդերային տեսանկյունից: Այսպես օրինակ, Ռ. Արուստամյանի «Գենդերային տարրերությունները բաղաքական խոսություն» թեկնածուական հետազոտության մեջ կիրառվում են մեր կողմից առաջարկված մեթոդաբանական մոտեցումները:

**Հետազոտության նյութի փորձաքննությունը:** Աստենախոսական աշխատանքի հիմնական դրույթները ներկայացվել են միջազգային գիտաժողովներում: Սույն աշխատանքի թեմայով գեկուցումներ են կարդացվել ամենամյա գիտաժողովներում ու քննարկումներում: Աստենախոտության շրջանակներում կիրառվող մեթոդներն ու մոտեցումները փորձարկվել են ԵՊՀ ուսանողների կուրսային և դիվլոմային հետազոտական աշխատանքներում: Աստենախոսական հետազոտության հիմնական դրույթներն ու եզրակացությունները քննարկվել են ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի նիստերում:

Աստենախոսական հետազոտության տեսականորեն հիմնավորված գլխավոր դրույթներն ու արդյունքները արտացոլվել են 1 մենագրական ուսումնասիրության մեջ, 28 հոդվածներում և 4 գիտաժողովի թեզիսներում:

Նպատակներն ու խնդիրները պայմանավորել են հետազոտության ընդհանուր տրամաբանությունն ու աշխատանքի կառուցվածքը, որը բաղկացած է ներածությունից, յոթ գլխից, որոնք, ըստ անհրաժեշտության, բաժանվում են ենթագլուխմների, ուսումնասիրության հիմնախնդիրը լուսաբանող և լրացնող ծանոթագրություններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

**Ներածության** մեջ սահմանվում են հետազոտության առարկան, հիմնավորվում են ուսումնասիրության արդիականությունը ու գիտական նորույթը, ձևակերպվում են նպատակներն ու հիմնական խնդիրները, նշվում են մեթոդաբանական հիմքերն ու կիրառված մեթոդները, շարադրվում են պաշտպանության ներկայացված դրույթները, վեր է հանվում աշխատանքի տեսական նշանակությունը, տեղեկություններ են տրվում ատենախոսության դրույթների փորձաքննության վերաբերյալ, հիմնավորվում է աշխատանքի կառուցվածքը:

Ալտենախոսության առաջին գլուխը (**«Գեներային հետազոտությունները լեզվաբանության ժամանակակից հարցուցում»**) բաղկացած է երկու ենթագլուխից:

Առաջին ենթագլուխը (**«Գեներային հետազոտությունների զարգացման նախադրյալները լեզվաբանության մեջ»**) նվիրված է տեսական խնդիրների քննությանը, որտեղ դիտարկվում է գեներային լեզվաբանության ձևավորումը՝ լեզվի մասին գիտության ընդհանուր զարգացման համատեքստում:

Երկրորդ ենթագլուխը (**«Լեզվի և գեների հետազոտությունների լեզվաբանական և համրամշակութային ավանդույթները»**) դիտարկվում են լեզվի և գեների փոխհարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրությունները լեզվաբանության մեջ:

Առկա տեսազրծնական նյութի թնական վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ գեներային հայեցակարգի դիտարկման շրջանակներում հիմնական շեշտը դրվում է տղամարդու և կնոջ ոչ թե բնական, կենսաբանական տարբերությունների վրա, որոնք ի սկզբանե կանխատեսված են նրանց ֆիզիոլոգիական յուրահատկություններով, այլև նրանց սոցիալական հետաքրքրությունների, պահանջմունքների և վարքագիծ վրա՝ չանտեսելով նաև գեներային հատկանիշների սերտ կապը համրամշակութային յուրահատկությունների հետ: Կարելի է ասել, որ յայն առումով, գեները համրամշակութային կառուց է: Գեներային համակարգը յուրահատուկ է նրանով, որ այն ցանկացած հասարակության բնութագրի անբաժանելի մասն է, և ցանկացած հասարակություն այս կամ այլ կերպ կարգավորում է հարաբերությունները սեռերի միջև:

Երկրորդ գլուխը վերնագրված է **«Լեզուն և գեներային կարծրատիպերը»** և բաղկացած է չորս ենթագլուխից: Այս գլուխ առաջին ենթագլուխում (**«Կարծրատիպ հասկացության ծագումն ու մեկնաբանությունը»**) նկարագրվում են կարծրատիպերի տեսակները, հատկությունները և գործառույթները: Կարծրատիպերը բոլորի կողմից ընդունված նորմերի և զաղափարների հավաքածու են, որոնք վերաբերում են տղամարդկանց և կանանց դերերին, նրանց վարքագիծ նորմերին և պահանջներին:

Կարծրատիպ եզրույթն առաջին անգամ ներմուծվել է հասարակական գիտություններ ՀՀ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում, երբ զանգվածային

գիտակցության գործառության օրենքները հետազոտելու և բացատրելու անհրաժեշտություն ծագեց: Ամերիկացի լրագրող և քաղաքագետ Ուոլթեր Լիպմանը դարձավ կարծրատիպային մտածողության և վարժագծի հայեցակարգի հիմնադիրը: Ու. Լիպմանը դիտարկում է կարծրատիպերը այն գործոնների համակարգում, որոնց ազդեցությունը մեծ է, ինչպես կարծրատիպերի առաջացման, այնպես էլ գործառության վրա<sup>1</sup>: Մարդկանց մեծամասնությունը կարծրատիպերի կրող է, սակայն դրանք կարող են փոփոխվել՝ կախված այս կամ այն երկրում պատմական, միջազգային և անգամ ներքաղաքական իրավիճակից:

Երկրորդ ենթագլխում (**«Գեներային ինքնության ծեռքբերումը որպես հասարակական երևոյթ»**) դիտարկվում է գեներային ինքնությունը որպես անձի սոցիալական նույնականության ենթակառույցներից մեկը: Հասարակության մեջ առաջանում է վարքի նորմերի համակարգ, որը սահմանում է որոշակի սեռային դերերի կատարում, համապատասխանաբար առաջանում է կարծրատիպերի շարք այն մասին, թե տվյալ հասարակությունում որն է «տղամարդկայինը», որը՝ «կանացին»:

Երրորդ ենթագլխում (**«Տղամարդկանց և կանանց դերի մասին պատկերացումները հասարակական կյանքում»**) ներկայացվում են տղամարդկանց և կանանց մասին սոցիալական պատկերացումները, որոնք վերաբերում են նրանց վարքագծի նորմերին: Տարբեր մշակույթներում մարդու միևնույն գործողություններին, կախված նրա սեռից, տրվում է տարբեր բովանդակություն. միևնույն բովանդակությունը տարբեր կերպ է դրսելովում արարքներում<sup>2</sup>:

Ա. Իզլիի սոցիալական դերերի տեսության համաձայն՝ ենթադրվում է, որ գեներային կարծրատիպերը առաջանում են կանանց և տղամարդկանց զբաղեցրած տարրեր դերերից<sup>3</sup>: Սեռերի բաշխումը, ըստ տարբեր սոցիալական դերերի, հանգեցնում է որոշ համրային նորմերի, որոնց համաձայն՝ կանայք և տղամարդիկ իրենց դրսերում են համապատասխանաբար կերպով:

Չորրորդ ենթագլխում (**«Գեներային կարծրատիպերը անգիտական հանրամշակույթում»**) ներկայացվում են անգիտական էթնոմշակութային կարծրատիպերը, որոնք մշակույթի արդյունք են: Մի շարք կարծրատիպեր կան, որոնք պարտադրվում են հասարակության կողմից, և դրանք կարելի է հստակորեն տեսնել լեզվում, որն էլ, արտացոլում է անգիտական լեզվակիրների բնավորությունն ու մշակույթը:

<sup>1</sup> Lippman W. Public Opinion. New York, 1950. p. 95.

<sup>2</sup> Stu Williams J. E., Best D. L. Measuring Sex Stereotypes: A Thirty-Nation Study (rev. ed.). Beverly Hills: Sage, 1990; Welch M. R., Page B. M. Sex Differences in Childhood Socialization. Patterns in African Societies. // Sex Roles. Washington, 1981, № 7.

<sup>3</sup> Eagly A.H. Sex Differences in Social Behavior. // A social-role interpretation. New York: Hellbaum, 1987.

**Երրորդ գլուխը վերնագրված է «Աշխարհի պատկերի լեզվամշակութային առանձնահատկությունները կարծրատիպային պատկերացումներում» և բաղկացած է երեք ենթագլխից:**

**Առաջին ենթագլխում («Լեզուն որպես մշակույթի բացարիկ երևոյթ»)** լուսաբանվում են լեզվի և մշակույթի կապը, աշխարհի լեզվական պատկերը, ինչպես նաև բացահայտվում են ազգային կարծրատիպերը, ազգամշակութային յուրօիննակլության հասկացությունները: Մշակույթը ներառում է ոչ միայն լեզուն, սովորույթները, համաձայնեցված ավանդույթները, այլև կարծրատիպերը, որոնք իրենց արտահայտությունն են գտնում մարդկանց կյանքի կազմակերպման և գործունեության ձևերում, նրանց փոխհարաբերություններում, ինչպես նաև նրանց կողմից ստեղծվող նյութական և հոգևոր արժեքներում: Ինչպես արդեն վերը նշվել է, կարծրատիպերը կարևոր են և համարվում են մշակույթի արդյունք, քանի որ դրանք են պայմանավորում մշակութային սպասելիքները. կարծրատիպից շեղումն ընկալվում է որպես նորմից շեղում:

**Երկրորդ ենթագլխի («Աշխարհի լեզվական և ազգային պատկերը»)** հիմնական նպատակն է հետազոտել աշխարհի լեզվական և ազգային պատկերները, որոնց ծևակլորմանը մասնակցող գործունները կարելի է բաժանել առնվազն երեք խմբի՝ միջավայրը, մարդու հոգեկանը (ներառյալ գիտակցականն ու ենթագիտակցականը) և լեզվի զարգացման օրենքները:

Սույն հետազոտության մեջ առանձնահատուկ շեշտվում է աշխարհի լեզվական և ազգային պատկերների արժեքնրման տեսանկյունը: Մեր կարծիքով, արժեքային մոտեցման առանձնահատկությունը հիմնարար դեր է խաղում աշխարհի ազգային պատկերի ծևակլորման մեջ: Աշխարհի արժեքային պատկերի հետազոտությունը հնարավոր է գնահատական պարունակող լեզվական կառույցներն ուսումնասիրելու օգնությամբ:

**Երրորդ ենթագլխում («Արժեհամակարգի լեզվական արտահայտությունը»)** դիտարկվում են աշխարհի արժեքային պատկերի հիմնական բաղադրիչները, հստակեցվում են մոտեցումներ առավել կարևոր արժեքանական հասկացությունների վերաբերյալ, ցույց են տրվում արժեքային համակարգի արտացոլման ձևերը լեզվում:

**Չորրորդ գլուխը («Երգիծական խոսույթի ժանրային հատկանիշները»)** բաղկացած է երկու ենթագլխից:

**Առաջին ենթագլխում («Ամեկրոտի ժանրը. նրա կառուցվածքի և բրվանդակության առանձնահատկությունները»)** քննարկվում են երգիծականի ստեղծնան հնարանքները: Առանձնակի ուշադրություն է հատկացվում երգիծական խոսույթի (տվյալ դեպքում անեկդոտի) սոցիալական բնույթին և դրա մշակութային արժեհամակարգին:

XX դարի ընթացքում արտասահմանյան հետազոտություններում ի հայտ եկան «անեկդոտ» եզրույթի տարրեր ընկալվումներ: Համաձայն «Պարզ ձևերի համրագիտարանի»՝ անեկդոտը (*anecdote*) կարձ, հաճախ բարոյակարտական

պատմություն է նշանավոր մարդկանց մասին և ներկայացնում է անեկոտի հերոսին որպես որոշակի հանրային խմբի կամ ժամանակաշրջանի ներկայացուցիչ<sup>4</sup>:

Անգլիական լեզվամշակույթում համանման հասկացությունը կոչվում է *joke*, *canned joke*, *funny story*: Հայերենում բոլորն էլ անվանվում են *անեկդոտ*, որը նշանակում է կարձ, զվարճակի, սրամիտ պատմվածք ծիծաղաշարժ կամ արտասալոր դեպքի մասին<sup>5</sup>:

Անեկոտը, ինչպես և ցանկացած տեքստ, որը պատկանում է առանձին ժանրի, օժտված է որոշակի կառուցվածքով, ծևով ու բովանդակությամբ: Դրանում արտացոլվում է աշխարհի ազգային պատկերը, խաղաղվում են նախադեպային հրավիճակներ, և գոյություն ունեն նախադեպային գործող անձինք, ուստի անեկոտը կարելի է դասել նախադեպային տեքստերի շարքին<sup>6</sup>:

**Երկրորդ ենթագլխում («Անեկդոտի երգիծական գործառույթները»)** անեկոտը դիտարկվում է որպես միջանձնային հաղորդակցության էական միջոց: Անեկոտը հաղորդակցային գործընթացում կատարում է հիմնականում խոսքարկման գործառույթ՝ նպաստելով շփում հաստատելուն և պահպանելուն: Անեկոտի գործարանական իմաստը շրջապատողմերին զվարճացնելուն է<sup>7</sup>:

**Հինգերորդ գլխում («Գենդերային կարծրատիպերի արտացոլումը անգլիական «կենցաղային» անեկդոտներում»)** վեր են հանվում անգլիական անեկոտների հանրամշակութային արանձնահատկությունները, ցոյց է տրվում լեզվի, մտածողության և մշակույթի փոխկապվածությունը, բացահայտվում է աշխարհի լեզվական պատկերի հասկացությունը, քննության են առնվում անեկոտի՝ որպես խոսույթի հիմնական բնութագրերը, վերլուծվում է գենդերային կարծրատիպերի կենսագործումը կոնկրետ տեքստերի օրինակով:

**Սրաջին ենթագլխում («Անգլիական «կենցաղային» անեկդոտների գենդերային կարծրատիպերի հանրամշակութային բնութագիրը»)** անեկոտների տեքստի բովանդակային վերլուծության հիման վրա վեր են հանվում այն ոլորտները, որոնցում արտացոլված են առավել տարածված կարծրատիպային պատկերացումները կանաց և տղամարդկանց բնութագրական գերերի կամ գործողությունների մասին<sup>8</sup>, մասնվիրապեւ՝ ընտանեկան հարաբերություններ (ամուսնական անհավատարմություն),

<sup>4</sup>Koch W. A. Simple Forms: an encyclopaedia of simple text-types in lore and literature. Bochum: Universitätsverlag Dr. Norbert Brockmeyer, 1994.

<sup>5</sup> Սիլյան Է.Ա. Արդի հայերենի բացատրական բառարան. Երևան, 1976:

<sup>6</sup> Шмелева Е.Я., Шмелев А.Д. Русский анекдот. Текст и речевой жанр. М.: Языки славянской культуры, 2002.

<sup>7</sup> Седов К.Ф. Психолингвистические аспекты изучения речевых жанров. // Жанры речи: Сб. научных статей. Вып. 3. Саратов: Изд-во ГосУНЦ Колледж, 2002.


<sup>8</sup> Stein Kiazian A. T. Гендерные асимметрии и стереотипы в юмористическом дискурсе. Saarbrücken, Deutschland: Palmarium Academic Publishing OmniScriptum GmbH&Co.KG, 2015.

*հիմարություն, արտաքին տեսք, շատախոսություն, հարթեցողություն, փեսագոքանչ հարաբերությունները ոլորտներում:*

Առկա գեներային կարծրատիպերի վիճակագրական տվյալները ներկայացվում են գծապատկերի տեսքով<sup>9</sup>:

### Գծապատկեր 1

**Օւնդերային կարծրատիպերը անգիտական  
«կենցաղային» անեկդոտներում**



*Ընտանեկան հարաբերությունները* աշխարհի ցանկացած երկրում անեկդոտների ամենավաշ թեմաներից է: Ընտանեկան կյանքի մասին անեկդոտներում իրացվում են հասարակության մեջ ընտանեկան կյանքի վերաբերյալ ձևավորված կարծրատիպերը:

Անգիտական «կենցաղային» անեկդոտներում իրենց վառ դրսնորումն են ստանում կանանց անուսնանալու ձգտումները: Դա թերևս կապված է համընդիհանուր տարածում գտած այն կարծիքի հետ, որ կինը պարտադիր պետք է իրեն դրսնորի ընտանիքում: Գենդերային կարծրատիպերի ազդեցությունն անգիտենում հատկապես ակնառու է լեզվական մի բանի բառազույցերում: Օրինակ, չնայած այն բանին, որ *spinster* և *bachelor* բառերը նշանակում են “*one who is not married*”, նրանց մեջ դրված է բացարձակապես հակառակ իմաստ: Եթե *bachelor*-ը չեղոք եզրույթ է և նշանակում է ազատ տղամարդ, որը կարող է ընտրություն կատարել երկրպագութիների

<sup>9</sup> Այս և բերված բոլոր գծապատկերները և այլուսակները Ա.Տ.Կմյաղամի:

բազմությունից, լեզվակիրները *spinster*-ը օգտագործում են որպես բացասական իմաստ ունեցող հասկացություն: Այն մատնանշում է կնոջ, որը ոչ ոքի պետք չէ և արդեն չափազանց ծեր է իր անձնական կյանքը դասավորելու համար:

Անգլիական «կենցաղային» անեկդոտների շտեմարանում կնոջը որպես հասարակության իրավահավասար անդամ ընդունելու թեման առհասարակ հազվադեպ է: Գոյություն ունի կարծրատիպ այն մասին, որ կինը տան օջախի պահապան է և պարտավոր է կատարել տնային ամբողջ աշխատանքը: Այս կարծրատիպի դրսւորումը հաճախ է հանդիպում անգլիական «կենցաղային» անեկդոտներում: Արձանագրված օրինակներում կնոջ կողմից տնային պարտականությունները կատարելը համարվում է բնական:

Որպես ընդհարման պատճառ՝ **ամուսնական ամիսատարմության թեման** անգլիական անեկդոտներում հաճախ է արժարժվում: Ամուսնական անհավատարմության իրավիճակներում առկա է այն գործոնը, որն արտացոլում է կանաց և տղամարդկանց կենսագործունեության պատճականորեն ձևավորված տիպերը: Տղամարդը միշտ դաշտանում է դրսում: Դա կարելի է բացատրել նրանով, որ տղամարդը միշտ համարվել է որսորդ և այդ պատճառով երկար ժամանակով բացակայել է ընտանիքը կերակրելու համար: Սակայն, «կենցաղային» անեկդոտների բովանդակային վերլուծությունից երևում է, որ կնոջ անհավատարմությունը երեք անգամ ավելի հաճախ է հանդիպում, քան ամուսնունը:

**Կանացի հիմարության** թեման բավականին հաճախ է արժարժվում անգլիական անեկդոտներում: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում “blonde” (շիկահեր կին) հավաքական կերպարը: Ժամանակակից հասարակությունում հանրահաշակ են շիկահեր կանացն մասին անեկդոտները: Շիկահերը այն հերոսուիկին է, որը աչքի է ընկնում չափազանց նեղ հետաքրքրությունների շրջանակով և մտավոր գարգաման ցածր մակարդակով՝ դրանով հանդերձ՝ գրավելով տղամարդկանց ուշադրությունը: Հարկ է նշել, որ շիկահերների մասին անեկդոտները բնութագրական են անգլալեզու հոլմորի համար:

Ներքոքերյալ «կենցաղային» անեկդոտում նշյալ կարծրատիպար ներկայացված է կնոջ բացահայտ հիմարության, սակավամտության դեպքերի լայն տարապատկերով, որն ի ցույց է դնում կանացն պարզամիտ լինելը: Այսպես՝

*A blonde walks into a doctor's office. She gets in the room with the doctor and says, "Doc, I hurt all over." The doctor is really confused. He says, "What do you mean, you hurt all over?" The blonde says, "I'll show you."*

*She then touches herself on her leg. "OW!!! I hurt there." Then she touches her earlobe. "OW!!!!!! I hurt there too!" Then she touches her hair. "OW!!!! EVEN MY HAIR HURTS!" So the doctor sits back and*

*thinks on it for 5 min. Then he says, "Tell me, is blonde your natural hair color?" The blonde says "Yes, why?"*

*The doctor says, "Well, you got a broken finger..."<sup>10</sup>*

Վերը նշված օրինակում ծաղրի են Ենթարկվում կանանց (մասնավորապես՝ **շիկահերների**) դատարկամտությունը և մտավոր թույլ կարողությունները: Բայց հինգ կնոջ գեղեցկության փաստից՝ արձանագրվում է նաև այն **տղամարդկանց իհմարությունը**, որոնք փորձում են նսեմացնել կանանց<sup>11</sup>:

Կարծրատիպային պատկերացումը, թե կնոջ մեջ ամենակարևորը **արտաքին տեսքն է**, վերլուծության Ենթարկված «կենցաղային» անեկդոտներում առկա է ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց գիտակցության մեջ: Առաջին դեպքում կանայք իրենք են ծգոտում բարելավել իրենց արտաքին տվյալները: Մյուս կողմից, տղամարդիկ գնահատում են արտաքուստ գրավիչ կանանց և ժաղրում տգեղադեմ արտաքինով կանանց:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում առանձնանում է կնոջ ծգոտումը՝ շրջապատին համոզելու, որ ինքը գեղեցիկ է ու երիտասարդ: Գերակշռում են այն դեպքերը, որոնցում կինը ներկայացվում է որպես սակավամիտ էակ, ընդ որում, այդ փաստը միավորվում է կնոջ՝ իր արտաքին տեսքի մասին հոգալու անհրաժեշտության հետ: Նշյալ անեկդոտներում երկու դրական բևեռների (*intellect and beauty*) համատեղումը համարվում է անհնարին և շրջապատի կողմից Ենթարկվում է ծաղրանքի: Օրինակ՝

*Luke's wife bought a new line of expensive cosmetics guaranteed to make her look years younger. After a lengthy sitting before the mirror applying the "miracle" products she asked, "Darling, honestly what age would you say I am?"*

*Looking over her carefully, Luke replied, "Judging from your skin, twenty; your hair, eighteen; and your figure, twenty-five."*

*"Oh, you flatterer!" she gushed.*

*"Hey, wait a minute!" Luke interrupted. "I haven't added them up yet."<sup>12</sup>*

<sup>10</sup> <http://idak.gop.edu.tr/ayhandiril/ENGLISH/SOME JOKES.htm> (08.09.2013)

<sup>11</sup> **Տես՝ Կնյազն Ա. Տ.** Гендерные стереотипы мужской и женской глупости в английских «бытовых» анекдотах. “*Studio Philologica*” Збірник наукових праць. Випуск 3. Київ, 2014.

<sup>12</sup> <http://www.homeenglish.ru/Jokes282.htm> (02.02.2011)

Այս «կենցաղային» անեկդոտի երգիծական տպավորությունը ձևավորվում է կոնջ՝ ավելի լավը երևալու ապարդյուն ջանքերով: Գեղեցիկ և երիտասարդ չլինելով՝ գրավիչ երևալու հավակնությունը ծիծառ է առաջացնում տղամարդկան մոտ:

**Կնոջ չափից դուրս շատախոսության կարծրատիպում** առանձնացրել ենք կանանց հետևյալ հատկությունը՝ խոսել շատ և անբովանդակ: Գոյություն ունեն բազմաթիվ անգլիական անեկդոտներ կանանց շաղակրատության, դատարկաբանության, բերանքացության ու կրվարության մասին:

Առօրյա-կենցաղային խնդիրների շարքում գերակշռում է **հարրեցողության թեման**: Սակայն տվյալ արատի ներկայացումը հասարակության մեջ ոչ թե հանդիրժողական բնույթ է կրում, այլ դիտարկվում է որպես տղամարդկային հայարտության տարր և յուրահատուկ տարրերանշան: Մեծ թվով անեկդոտներ կան, որոնցում կարենոք ոչ թե գինարբութի գործընթացն է, այլ այն, ինչ ծավալվում է դրա համապատերում: Անգլիական անեկդոտները կարուցված են նույն սցենարով և, որպես կանոն, սկսվում են հետևյալ արտահայտությամբ. “*Two drunks stumble out of a pub ...; A man enters into a bar...; A local man walks into a pub.....; There was once a man who was in a bar, terribly drunk*” և այլն: Նշյալ անեկդոտներում գլխավոր հերոսը խնում է միայնակ և բնութագրվում է որպես **“drunk”**:

Գիճարբութի իրավիճակի առավել տիպական մասնակիցը ամուսնացած արական սերի անձն է: Կիմը անգլիական «կենցաղային» անեկդոտներում չի խնում, սակայն հանդես է գալիս որպես հակառակորդ, օրինակ՝ գործող անձի կոնջ (կամ զոքանչի) դերում:

Անգլիական անեկդոտներում “*mother-in-law*” (**զոքանչ**) կարծրատիպը բնութագրվում է բարձր պահանջվածությամբ, ունի ընդգծված բացասական գնահատողական երանգավորում, որը հաճախ դրսևորվում է տարբեր հանատեքստերում: Անեկդոտը դուրս է բերում **փեսայի** և **զոքանչի** ամիաշտ հակամարտությունը երկու կոնկրետ անհատների միջանձնային ընդհարումների շրջանակներից և մեկնաբանում այն որպես վարվեցողության համընդիանուր նմուշ-օրինակ:

Վիճակագրության մշակման մեթոդով վեր են հանվել միայն կանանց և տղամարդկանց հետ աղերսներ ունեցող գեներային կարծրատիպերը անգլիական «կենցաղային» անեկդոտներում:

## Աղյուսակ 1

### Կանանց վերաբերյալ կարծրատիպեր

<b>Ընչաքաղց</b>	<b>5%</b>
<b>Կռվարար, շատախոս</b>	<b>10%</b>
<b>Անպիտան</b>	<b>5%</b>
<b>Խորամանկ, դաժան</b>	<b>5%</b>
<b>Անհավատարիմ, անառակ</b>	<b>30%</b>
<b>Սակավամիտ</b>	<b>30%</b>
<b>Տգեղ, գեղ, ծեր</b>	<b>15%</b>

## Աղյուսակ 2

### Տղամարդկանց վերաբերյալ կարծրատիպեր

<b>Ազրեսիվ</b>	<b>20%</b>
<b>Անհավատարիմ</b>	<b>25%</b>
<b>Կոպիտ</b>	<b>30%</b>
<b>Գերիշխող</b>	<b>10%</b>
<b>Հիմար</b>	<b>10%</b>
<b>Մասպարծ</b>	<b>5%</b>

Երկրորդ ենթագլխում (**«Գեներային ազրեսիան անգիտական կենցաղային» ամեկդուսներում**) դիտարկվում են հաղորդակցության կողմերի ազրեսիվ վարքի դրսևորումները:

Անգիտական ամեկդուսներում տղամարդիկ ավելի հաճախ են հանդես գալիս որպես ազրեսիայի անմիջական նախաձեռնողներ. դրանք հագեցած են հուզական վիրավորանքներով (այդ թվում՝ հայիշյանքներ պարունակող): Անգիտական «կենցաղային» ամեկդուսներում **փեսայի** ու **զոքանչի** մասին տեքստերում իրացվում է այն ազրեսիան, որը ախօյց կյանքում ճարահատյալ ձնշվում է մշակութակրի կողմից: Դիտարկվող ամեկդուսների մեծ մասի հիմքում ընկած է **զոքանչի** չեզոքացման, այսինքն՝ նրան բացառելու, հեռացնելու, վերացնելու ձգուումը: Հետաքրքրական է, որ **փեսայի** ու **զոքանչի** մասին արկա ամեկդուսային տեքստերում իրացվում է այն ազրեսիան, որը իրական կյանքում այնուամենայնիվ զսպվում է և չի դրսևորվում:


Լեզվակիրների գիտակցության մեջ **“mother-in-law”** (զոքանչ) բառը օժտված է հզոր բացասական երանգավորմամբ, մինչեւ դրան իմաստով մոտ “father-in-law, brother-in-law, sister-in-law, son-in-law, daughter-in-law” միավորները, գուերեւ գուրկ են հավելյալ իմաստառձական երանգներից:

Ժամանակակից անգիտական հանրամշակույթի համար հատկորոշ բոլոր

կապերից *mother-in-law* (*գործանչ*) / *son-in-law* (*վիեսա*) հարաբերություններն ամենաարդիականն են: Ընդ որում, այս գույքի անդամներից առավելագույնս շեշտադրվում է *mother-in-law-ն* (*գործանչը*), որը հաճախ խոսքային և ոչ խոսքային ազրեսիայի թիրախն է դաշնում անգիտական անեկդոտներում: Դրա մասին է վկայում ազգակցական փոխհարաբերությունների մասին վիճակագրական մշակման մեթոդի արդյունքում կազմված հետևյալ գծապատկերը:

## Գծապատկեր 2

### Ազրեսիան անգիտական «կենցաղային» անեկդոտներում



Այսպիսով, դիտարկվող «կենցաղային» անեկդոտներում կինը հանդես է գալիս երկու հիմնական գործառություն՝ որպես չարության մարմնավորող՝ **գործանչ**, և որպես **կին**: Կինն ու գործանչը տղամարդու համար անհարմարավետություն ստեղծող մեկ միասնական գործոնի դեր են կատարում և ազրեսիան տարածվում է նրանց վրա հավասարաչափ:

**Վեցրորդ գլխում «Գենդերային անհատի հուզազգացական խոսքի առանձնահատկությունների լեզվական դրսորումները անգիտական «կենցաղային» անեկդոտներում»** քննության է առնվում լեզվական անհատի գենդերային տեսանկյունը «կենցաղային» անեկդոտներում, քանի որ գենդերը՝ որպես հասարակության կողմից տղամարդու և կնոջ դերերի, վարքի, հոգեկան և զգայական բնութագրերի կառուցման հանրամշակութային բարդ գործընթաց, ամենաանմիջական ձևով կապված է կանանց և տղամարդկանց հուզականության հետ:

Սույն գլխում հետազոտվում են տղամարդկանց և կանանց խոսքում հուզարտահայտչական միջոցները՝ **բառային** և **շարահյուսական** մակարդակներում:

**Առաջին Ենթագլխում («Բարային միջոցների դրսևորումը տղամարդկանց և կանանց հուզազգացական խոսքում»)** ներկայացվում են տղամարդկանց և կանանց բառագրութածության տարբերությունները:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում գործածվող պիտակավորող-գնահատողական ամբողջ բառապաշարից ընտրվել են միայն այն ածականները, որոնք դրսևորվում են հաղորդակցվող անհատի խոսքում՝ ուղղված լինելով տղամարդուն կամ կնոջը, և բնութագրում են նրանց ինչպես դրական, այնպես էլ բացասական լույսի ներքը:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում կանանց և տղամարդկանց վերաբերյալ գործածվում են տարբեր բառեր՝ հատկապես նկարագրական և գնահատողական: Երբ խոսում են կնոջ մասին, նրան անվանում են *foolish, silly, stupid, ugly, slutty, gorgeous, beautiful, attractive, charming, slender, slim, awkward, capricious, coquette, talkative* և այլն: Երբ խոսում են տղամարդու մասին, նրան անվանում են *strong-willed, proud, villain, courageous, firm, bold, arrogant, boastful, broad-shouldered, self-confident, handsome, boring, lazy, drunken, fat, cheap, coward* և այլն:

Այս տարբերությունները անառարկելի չեն, կնոջը կարող են անվանել նաև *conceited, imperious*, իսկ տղամարդուն՝ *sweet, silly, foolish*, սակայն բնութագրական մակդիրներ անգլիական անեկդոտներում հանդիպում են հազվադեպ, սովորաբար այն ժամանակ, երբ տղամարդուն ուզում են վերագրել կնոջ հատկանիշներ, իսկ կնոջը՝ տղամարդու: Տղամարդիկ իրենց գնահատականներում առավելությունը տալիս են իրենց սերի ներկայացուցիչներին՝ նշելով ուժը, օրինավորությունը, համարձակությունը, մեծահոգությունը և ազնվությունը: Անգլիական «կենցաղային» անեկդոտներում տղամարդկանց մեջ բացասական արձագանք են առաջացնում տղամարդկանց անմտությունը, հիմարությունը, դավաճանությունը, թեև վերջին երկու հատկանիշները կարծրատիպային պատկերացման հետևանքով վերագրվել են կանանց:

Այսպիսով, վերլուծելով պիտակավորող-գնահատողական բառապաշարի կիրառումը որպես հուզարտահայտչական միջոցներից մեկը, որը գենդերային անհատը գործածում է անգլիական «կենցաղային» անեկդոտներում, կարող ենք եզրակացնել, որ անգլիացի տղամարդիկ իրենց խոսքում ավելի շատ գնահատող-պիտակավորող բառեր են օգտագործում, քան կանայք (*տես այլուսակ 3, էջ 20*), ընդ որում բացասական նրբիմաստների թիվը զգալիորեն մեծ է դրական պիտակավորող գնահատականներից: Մեր կարծիքով, դա բացատրվում է նրանով, որ Երբ մարդը բացասական հույզեր է ունենում, նրա ապրումներն ավելի խորքային բնույթ են կրում, ուստի բացասական գնահատականը միշտ քանակապես և որակապես ավելի հարուստ է՝ հաճախ կոպիտ բառապաշարի ներգրավմամբ:

Հոգարտահայտչական բառապաշարին է վերաբերում նաև **հայիոյախոսությունը**, որը խոսողի հոգական լիակատար անկաշկանդության դրսերումն է: Անգլիական «կենցաղային» անեկդոտներում տղամարդկանց խոսակցական լեզվին հատուկ է հակվածությունը ցածր ոճին և հայիոյանքին (այդ թվում՝ անպարկեցու բառապաշարին) ոչ պաշտոնական շփումներում (*տես այդուսակ 3, էջ 20*): Տղամարդիկ գերազանցապես օգտագործում են մարմնի տարբեր մասերի հետ կապված վիրավորական բառապաշար (*ass, dick, penis, prat* և այլն): Այս փաստը հաստատում է տղամարդկանց հաղորդակցության այնպիսի առանձնահատկությունը, ինչպիսին է ավելի քիչ զսպվածությունը և հայիոյական բառապաշար օգտագործելու միտումը նրանց խոսքում: «Կենցաղային» անեկդոտներում ի հայտ են բերվել “fuck” անպարկեցու բառի գործածության բազմաթիվ դեպքեր. այն դրսերվում է տարբեր հոգավիճակներում, առավելապես տղամարդկանց խոսքում: Հետազոտված ամբողջ բառապաշարում “*bitch*” (*son of a bitch, clumsy bitch, silly bitch* և այլն) բառը գործածել են միայն տղամարդիկ ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց հասցեին: Չնայած այն բանին, որ անգլիական «կենցաղային» անեկդոտներում կանայք մի քանի անգամ ավելի քիչ են գործածում կոպիտ բառեր, սակայն նրանց բառապաշարը նույնպես աչքի է ընկնում գրեհիկ ոչի դրսերմաբ և դրա արտահայտման ուժգնությամբ: Լեզվական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ անգլիական անեկդոտներում կանայք կարող են գործածել ցածր ոճի և նույնիսկ գրեհիկ բառապաշար նաև հակառակ սերի ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս:

Հակառակ սերի անձանց բացասաբար գնահատելու մեկ այլ բնութագրական առանձնահատկություն է կանանց կողմից հետևյալ գրեհիկ բառերի գործածությունը՝ *idiot, animal, swine, bugger* և այլն, որը, անկասկած, խոսողի հոգապումների վառ վկայությունն է:

Ուսումնասիրության են ենթարկվել նաև տղամարդկանց և կանանց հոգավիճակներն արտահայտող բազմաթիվ **ուժգնացնող բառեր**. գեներային առումով դրանք գերակշռում են կանանց խոսքում (*տես այդուսակ 3, էջ 20*): Առանց հոգական լիցքերին ուժգնություն հաղորդող լեզվական միավորների (եղանակավորող բառերի, մասնիկների և այլնի)՝ կնվազեր խոսակցական լեզվի հոգականությունն ու անկաշկանդությունը: Առավել հաճախ կանանց խոսքում, գործածվում են ուժգնացնող-ածական միավորներ՝ *admirable, colossal, enormous, senseless, beautiful, considerable, terrible, terrific, incredible, all-important, extraordinary, dearest, earnest, fondest, heaviest, highest, hopeless, fantastic, catastrophic, exclusive, hilarious, fabulous, furious, rough, wonderful, mad, monstrous, boundless, incredible, extraordinary, extreme* և այլն: Առավել գործածական են *great, so, so much, pretty, really, too, quite* ուժգնացնող բառերը: Նախադասության մեջ մեկից ավելի ուժգնացնող բառերի առկայությունը վկայում է մարդու հոգավիճակի, ապրումների խորության մասին: Մեր կողմից դիտարկված

**զայրույթի և ուրախության** հոգավիճակներում երկու սերի ներկայացուցիչներն էլ օգտագործում են մեծ թվով ուժգնացնող բառեր:

Մարդու խոսքը այնպիսի միջոցների կարիք ունի, որոնք կկարողանան աննիշականորեն արտահայտել հոգեր, արտացոլել վերաբերնունք արտաքին աշխարհի երևոյթների նկատմամբ: Անգամ մեկ ծայնարկության արկայությունը հոգականություն է հաղորդում ամբողջ արտահայտությանը: Անգիտական անեկուտներում կանայք իրենց խոսքում ավելի հաճախ են գործածում ծայնարկություններ (*տե՛ս աղյուսակ 3, էջ 20*): Մասնավորապես՝ հաճախաղեալ են *alas, dear God, Good gracious, God, oh God, oh my God, hush, my word, oh, oh dear, oh my dear me, oh no, thank goodness, Oh Jesus* ծայնարկությունների կիրառությունները: Ինչ վերաբերում է ծայնարկությունների կիրառությանը տղամարդկանց խոսքում, ապա այսուհետ ավելի հաճախ գործածվում են. *ah, aha, aw, ay, aye, bah, by God, oh damn, God damn, devil, good Lord, gosh, ha, By jove, heaven knows, hell, hey, hush, hmmm, oh hell, yeah*: Այն ծայնարկությունները, որոնցով դիմում են Աստծուն և հիշատակում Նրա անունը, կարծրատիպային ընկալմամբ վերագրվում են կանանց և արտահայտում են **վախ, երկուղ, սարսափ:**

Անգիտական «կինցաղային» անեկուտներում արձանագրվել են ծայնարկություններ, որոնք, համատեքստով պայմանավորված, արտահայտում են խոսողի զանազան հոգեր: Օրինակ՝ “*oh*” ծայնարկությունը կարող է արտահայտել **զայրույթ** (տղամարդկանց խոսքում), **զարմանք, տիրություն, ուրախություն, վախ** (կանանց խոսքում): Ընդ որում **ուրախության և զայրույթի** հոգերը քանակով առավել հաճախաղեալ են:

Բառային մակարդակում հոգազգացական լեզվական անհատի գեներային առանձնահատկությունների վիճակագրությունը ներկայացվում է այսուսակում:

### Այլուսակ 3

#### Բառային միջոցները կանանց և տղամարդկանց խոսքում

	Կանայք	Տղամարդիկ
<b>Հոգագնահատողական բաղադրիչով բառապաշար</b>	<b>30%</b>	<b>70%</b>
<b>Հայիշական բառապաշար</b>	<b>15%</b>	<b>85%</b>
<b>Ուժգնացնող բառեր</b>	<b>60%</b>	<b>40%</b>
<b>Չայնարկություններ</b>	<b>55%</b>	<b>45%</b>

Հույգերի արտահայտումը խոսքում կարող է փոխանցվել ոչ միայն հոգարտահայտչական բառային միջոցներով, այլև շարահյուսորեն, որի քննությունը ներկայացված է **վեցերորդ գլուխ երկրորդ ենթագլխում** («**Տղամարդկանց և կանանց հոգազգացական խոսքի շարահյուսական առանձնահատկությունները**»):

Հուգականությունը կարող է ուղեկցել ցանկացած հաղորդակցային տիպի նախադասության<sup>13</sup>: Հույզը բերում է արտահայտության կառուցատարրերի անկման, որն էլ, իր հերթին, հանգեցնում է շարահյուսության մի շարք առանձնահատուկ կառույցների ծևավորման: Դրանցից են **գեղչված կառույցները**: Անգլիական «կենցաղային» անեկդոտներում գեղչված նախադասությունները մեծ մասամբ տղամարդկանց խոսքում են հանդիպում (տե՛ս աշյուսակ 4, էջ 22): Վերլուծությունը ցույց է տալիս, որ ամենահաճախադեա հույզերը **զայրույթը, ուրախությունը և զարմանքն են**, որոնց արտահայտման ժամանակ խոսողը (հատկապես տղամարդիկ) դիմում է գեղչված կառույցների գործածությանը: Սակայն ուժգին հույզերը կարող են ոչ միայն նպաստել բարեր բաց թողնելուն, այլև խախտել բարերի շարադասությունը արտահայտություններում:

Մեր լեզվական նյութում **փոխակերպված կառույցների** քննությունը գենդերային մոտեցմամբ ցույց է տալիս, որ կանայք ավելի հաճախ են գործածում զանազան փոխակերպումներ, քան տղամարդիկ (տե՛ս աշյուսակ 4, էջ 22): Փոխակերպված կառույցները քննութագրվում են բուն արտահայտության ներսում տեղեկատվական նյութի փոխատեղմամբ:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում գենդերային տեսանկյունից քննության են ենթարկվել նաև **անավարտ նախադասությունները**, որոնք վկայում են խոսելու պահին խոսողին համակած ուժեղ հուգապրումների մասին: Որքան ուժեղ է հույզը, որքան ավելի հուզված է խոսողը, ակներևաբար, այնքան գերզգայական կլինի անհատի խոսքը: Բարի գեղչումը կարող է հաճախ թյուրմբռնում առաջացնել: Զեղչված բառով արտահայտությունը հասկանալի է միայն այն դեպքում, երբ այն նատուրալիզմ է համատեքստում կամ ուղեկցվում է ցուցադրական ժեստով: Անավարտ նախադասությունները պայմանավորված են կոնկրետ խոսքային իրավիճակով:

Մեր կողմից վերլուծված **անեկդոտներում** անավարտ նախադասությունների գործածությունը կանանց խոսքում քանակապես գերազանցում է տղամարդկանց խոսքում եղածներին (տե՛ս աշյուսակ 4, էջ 22):

Ինչ վերաբերում է կրկնություններով արտահայտվող գենդերային տարրերություններին, ապա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երգիծական խոսություն (անեկդոտում) տղամարդիկ օգտագործում են կրկնությունը որպես դադար՝ երկխոսության հաջորդ դրվագը մտածելու համար: Կրկնությունը, պարունակելով հուզականության մեջ լիցք, տղամարդկանց խոսքում կարող է արտահայտել բազմազան հույզեր՝ **վախ, անհանգստություն, տագնապ, զարմանք**՝ ընդ որում կրկնություններ ծնող պատճառներ կարող են լինել նաև օգնության խնդրանքով դիմելու ցանկությունը, հանաձայնություն հայտնելու,

<sup>13</sup> Гак В.Г. Язык как форма самовыражения народа. // Язык как средство трансляции культуры. Сб. научных статей. М.: Наука, 2000.

խոսողի կարծիքով որևէ կարևոր միտք կամ խոսքի մի հատված առանձնացնելու, շեշտելու և գրուցակցի ուշադրությունը գրավելու ժգույնը:

Հուզական երանգավորմամբ կրկնությունները բազմաբնույթ են. դրանք կանանց խոսքում կարող են բնութագրել ինչպես դրական, այնպես էլ բացասական հույգեր՝ **անհանգստություն, ուրախություն**: Տղամարդկանց խոսքում կրկնության գործածությունը քանակապես գերազանցում է կանանց խոսքում օգտագործվածների թիվը (տե՛ս աղյուսակ 4, էջ 22), որը, մեր կարծիքով, կարող է բացատրվել հույգերի խոսքի լարվածությամբ. և սեփական խոսքային միջոցների անվերահսկելիությամբ:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում խոսողի հուզավիճակի ձևավորման մեջ առանձնահատուկ տեղ ունեն նաև **բացականչական նախադասությունները**: Ցանկացած բացականչական նախադասություն ունի առնվազն երկու փոխկապակցված խնդիր. մի կողմից՝ տեղեկություն փոխանցելը, տեղեկատվություն հայցելը, գործողության դրդելը, մյուս կողմից՝ խոսողի հուզավիճակն արտահայտելը: Խոսողի զանազան հույգերն (ուրախություն, զարմանք, զայրույթ, վրդովմունք, տիրություն և այլն) արտահայտող բացականչական արտահայտությունները արձանագրվել են հատկապես կանանց խոսքում (տե՛ս աղյուսակ 4 էջ 22):

Չարահյուսական մակարդակում լեզվական անհատի գենդերային առանձնահատկությունների վիճակագրությունը ներկայացվում է աղյուսակում:

#### Աղյուսակ 4.

##### Չարահյուսական միջոցները կանանց և տղամարդկանց խոսքում

	Կանայք	Տղամարդիկ
<b>Զեղչած կառուցմեր</b>	30%	70%
<b>Փոխակերպված կառուցմեր</b>	65%	35%
<b>Անավարտ նախադասություններ</b>	60%	40%
<b>Կրկնություն</b>	20%	80%
<b>Բացականչական նախադասություններ</b>	70%	30%

Ուսումնասիրված լեզվական նյութի հիման վրա կարելի է ենթադրել, որ անգլիական «կենցաղային» անեկդոտներում, ըստ գենդերային գործոնի, հուզարտահայտչական տարրեր պարունակող շարահյուսական և բառային միջոցների իրացման քանակական տարրերությունները մեծ են կանանց և տղամարդկանց խոսքում:

Յոթերորդ գլուխում (**«Ոչ խոսքային և հարախոսքային հաղորդակցության գենդերային հայեցակերպը երգիծական խոսություն»**) հետազոտության են

Ենթարկվում տղամարդկանց և կանանց խոսքում հուզարտահայտչական միջոցները հաղորդակցության ոչ խոսքային և հարախոսքային մակարդակներում:

**Առաջին ենթագլխում («Ոչ խոսքային միջոցները տղամարդկանց և կանանց հուզազգացական խոսքում») քննության են առնվում տղամարդու և կնոջ ոչ խոսքային վարքագծերում առկա տարբերությունները անգիտական անեկուտներում:**

Մեր աշխատանքում լեզվական նյութն ուսումնասիրելիս նկատել ենք, որ անգիտական «կենցաղային» անեկուտներում ոչ խոսքային միջոցներ կիրարելիս շեշտը հիմնականում դրվում է **շարժաբանական (կինետիկ) բաղադրիչների** (դիմախոսության և ժեստերի) նկարագրման վրա:

Ոչ խոսքային վարքում արտացոլվող գեներային տարբերությունները որոշարկելիս պարզ է դառնում, որ առանձին ժեստեր կամ նոյնիսկ ոչ խոսքային վարքի ամբողջական ոճեր բնորոշ են կանանց և համապատասխանաբար՝ տղամարդկանց՝ անկախ իրական սերից և կատարողից:

Անգիտական «կենցաղային» անեկուտներում հանդիպում են հաղորդակցության որոշակի **ժեստային բաղադրիչներ**: Ուսումնասիրվող նյութը վերլուծելիս ոչ խոսքային հաղորդակցության միջոցների ողջ գինանոցից, առանձնացվել են հաղորդակցության որոշակի ժեստային բաղադրիչներ, որոնք կազմել են ամենաբազմաքանակ խումբը: Ընդհանուր առմանք տղամարդկանց և կանանց վարքին բնորոշ են տարբեր ժեստեր, սակայն մի քանիսը բնորոշ են անգիտական լեզվամշակույթին ընդհանրապես: Օրինակ՝ “*bang one’s fist on the table*”; “*clench one’s fists*” (բռունքը սեղանին խփել, բռունքըները սեղմել) ժեստերը տղամարդկանց համար, բնութագրական և կարծրատիպային են, նոյնը չի կարելի ասել կանանց վերաբերյալ: Տղամարդկանց բնորոշ ժեստ է “*scratch one’s head*”-ը (ծոծրակը քորել), որը արտահայտում է **զարմանք, տարակուսանք, վարամմումք**:

Ծայրահետ նյարդային վիճակում մարդը հաճախ չի կարողանում տեղը նստել և սկսում է քայլել: Անգիտական «կենցաղային» անեկուտներում **զայրույթի** հովագի այդքան հաճախաբեկ ոչ խոսքային դրսեղում նկատել ենք միայն տղամարդկանց վարքում: Իսկ դրական սպասումները տղամարդիկ արտահայտում են “*rub one’s hands*”-ը (ծերքերը շփել) ժեստի օգնությամբ:

Ավանդաբար աղջիկներին սովորեցնում են, որ ոյուրաքրոքությունը գրկում է նրանց գրավչությունից: Սակայն ժամանակակից կանայք իրենց զայրույթն արտահայտում են նոյնքան հաճախակի և նոյն սաստկությամբ և ձիշտ այնպես, ինչպես տղամարդիկ: Այսպես օրինակ՝ “*grab someone’s hair*” ժեստը (քաշել ինչ-որ մեկի մազերը), որը կանանց բնորոշ ժեստ-ռեակցիա է, օգտագործվում է անգիտական «կենցաղային» անեկուտներում **զայրույթի** հուզավիճակում: Ամենաբնութագրական հոյզերը, որոնց դեպքում կիրառվում է

այդ ժեսոր գարմանքը, վրդովմունքը, վախը, հուսահատությունը, ուրախությունն են:

Անգլիական անեկդոտներում “cover one's face with one's hands” (երեսը ձեռքերով փակել) ժեսոր առավելապես օգտագործում են կանայք, երբ լախս են, վշտանում, այլայլվում, ամազում: Տվյալ ժեսոր նախատեսված է հենց հովզի արտահայտման, այլ ոչ թե հովզը թաքցնելու համար. սովորաբար թաքցնում են արցունքները (որպես վշտի արտահայտություն) կամ այտերի կարմրելը (որպես ամաչելու արտահայտություն), այլ ոչ թե բուն վշտի կամ ամորի հովզերը: Անգլիական «կենցաղային» անեկդոտներում “bury one's head in one's hands”; “put one's head in one's hands”; “bow one's head” ժեսոր զիխավորապես օգտագործում են տղանարդիկ:

“Wring one's hands” (ձեռքերը կոտրատել) ժեսոր սովորաբար օգտագործվում է այն իրավիճակում, երբ ժեսոր ցույց տվողը շատ է ուզում, բայց ոչ մի կերպ չի կարող ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Սեփական անգորության զգացողությունը տանջալից է ժեսորի հեղինակի համար, և նա ձգուում է ինչ-որ բան անել և կատարում է ժեստային շարժում: Սովորաբար ժեսորի հեղինակը դրա հետ մեկտեղ ուժեղ բացասական հովզապրում է ունենում՝ վիշտ, վախ ինչ-որ մեկի համար, թախիծ և այլն: Անգլիական «կենցաղային» անեկդոտներում այդ ժեսոր ավելի հաճախ օգտագործում են կանայք: Իգական սերի ներկայացուցիչներին բնորոշ ժեստերից է նաև “stamp one's foot”-ը (ոտքերով դոփել), որը նախատիպորեն կապված է քնահաճ երեխայի կամ կնոջ հետ:

Անգլիական անեկդոտներում միայն կնոջն է բնորոշ (տղանարդու վարքում այն չենք արձանագրել) faint (ուշաբակվել) ժեսոր՝ մի շարք հովզերի՝ ուրախության, վշտի, վախի ազդեցությամբ:

Անգլիական անեկդոտներում մարդու ոչ խոսքային վարքում դիմախոսության բաղադրիչներից կենտրոնական տեղ է գրավում դեմքի արտահայտությունը:

Դիմախոսությամբ դրսերված հովզերի (*վախ, հակակրանք, ուրախություն, զայրույթ, գարմանք*) մեծ մասն առավել ճիշտ է ընկալվում կանանց դեպքում: Կանանց դիմախոսական դրսերումներում առաջատարը աչքերի այն արտահայտությունն է կամ հայացքը, որը հաղորդվում է այդ շարժառությի հովզարտահայտչական տարբեր որոշարկիչների օգնությամբ՝ “look down”-ը (ցույց է տալիս ամոթ, վարանմունք, վիշտ, դժգոհություն), “widen the eyes”, “flutter the eyes”-ը (հասոուկ է վախի և գարմանքի դեպքում): Աչքերի արտահայտությամբ կարելի է հասկանալ և վերծանել ցանկացած հովզական տեղեկատվություն:

Կանայք տղանարդկանցից ավելի հաճախ են իրենց խոսքն ուղեկցում դեմքի տարբեր արտահայտություններով տիսրության ու վախի հովզավիճակներում: Հովզերի դիմախոսական դրսերումը առհասարակ բնորոշ

է կանանց վարքագծին (*տես աղյուսակ 5, էջ 26*), որի հիման վրա կարելի է ենթադրել, որ կանայք չեն կարողանում թաքցնել իրենց հոյզերը:

Ոչ խոսքային վարքի հաջորդ բաղադրիչը **շոշափողական միջոցներն են (տակեսիկան)**: Անգլիական «կենցաղային» անեկդոտներում տարբերություններ նկատվում են նաև տղամարդկանց ու կանանց շոշափողական վարքում: Մինյանց դիպչելու ամենատարածված ձևը **ծեռքսեղմումն է**, որը տարբերվում է իր կատարման ձևով, ուժով և տևողությամբ: Չափից ավելի ուժեղ ծեռքսեղմումը տղամարդկանց տարբերակից առանձնահատկությունն է. այդպես են վարվում միտումնավոր՝ ցանկանալով շեշտել իրենց ուժը: Զեռքսեղման ամենագրեսիվ ձևը օգտագործում են տղամարդիկ (*տես աղյուսակ 6, էջ 26*): Այն բնորոշ է ագրեսիվ, իշխող տղամարդուն, որն էլ միշտ ծեռքսեղման նախաձեռնողն է *take / squeeze one's hand firmly; shake hands with smb.; clasp/ grab / grasp smb.'s hand*: Սակայն կանայք երբեմն ստիպված են ցուցադրել ամուր ծեռքսեղմում՝ տղամարդկանցից պաշտպանվելու համար:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում հաղորդակցվելիս **շոյելը, համրուրելը** կատարում են խրախուսական, հուզական աջակցության գործառույթը: Համրուրը, որպես ֆիզիկական շիման տարր, անգլիական անեկդոտներում կանանց վարքում դիտվում է միայն մտերմիկ հարաբերությունների դեպքում: *kiss the guy on the cheek; kiss his hand; kiss him gently on the forehead; kiss him long and passionately; throw a kiss; give him a kiss; kiss the back of his neck*:

Ոչ խոսքային հաղորդակցման այնպիսի միջոց, ինչպիսին **գրկելն է (hug smb.; hug smb. from behind)**, ավելի հաճախ համդիպում է բոլով սերի ներկայացուցիչների շփումներում, տղամարդկանց շրջանում այն անհամենատքից է համդիպում (*տես աղյուսակ 6, էջ 26*): Գրկախառնության բնույթով, ուժով, տևողությամբ որոշվում է մարդու արտահայտած զգացմունքների նշանակությունը (*embrace smb. tightly; give a hug; carefully embrace smb.; hold smb. in a tender embrace; put smb.'s arm around smb.*):

**Ուժին կամ մեջքին թիթիկացնելը** հիմնականում բնորոշ է տղամարդկանց (*տես աղյուսակ 6, էջ 26*): Այդ ոչ խոսքային ժեստերը (*pat smb. on the head; pat smb.'s head; pat smb. on the arm; pat smb.'s hand; pat smb. on the back; tap smb. on the knee; tap/ dab smb. on the shoulder; hit smb. on the upper arm*) մեկնաբանվում են որպես բարեկամական վերաբերմունքի, մասնակցության կամ խրախուսման արտահայտություն: Դրանք գործնականում առկա են բոլոր տարիքային խմբերում և օգտագործվում են նաև զրուցակցի ուշադրությունը գրավելու համար:

**Հայկելը** լայնորեն տարածված է ոչ խոսքային շիման աշխարհում: Տարաբնույթ հպատակացի չարտահայտած զգացմունքների ցուցիչներն են (*touch smb.'s hand; touch with the tips of one's fingers; touch smb.'s elbow; touch smb.'s knees with yours; touch smb.'s chest; touch the back of smb.'s head; tip*): Դրանք

կարող են լինել քնքուշ, սիրավիր, թեթև, ուժեղ, կոպիտ, վիրավորող և ավելի հաճախ նկատվում են կանանց վարքում (տես այլուսակ 6, էջ 26):

Ոչ խոսքային մակարդակում հոգարտահայտչական միջոցների գեներային առանձնահատկությունների վիճակագրությունը ներկայացվում է այլուսակներում:

### Այլուսակ 5

#### Հարժաբանության միջոցները կանանց և տղամարդկանց խոսքում

	կանայք	տղամարդիկ
<b>ժեստեր</b>	<b>55%</b>	<b>45%</b>
<b>դիմախոսություն</b>	<b>60%</b>	<b>40%</b>

### Այլուսակ 6

#### Շոշափողական միջոցները (տակեսիկան) կանանց և տղամարդկանց խոսքում

	կանայք	տղամարդիկ
<b>ծեռքսեղմում</b>	<b>30%</b>	<b>70%</b>
<b>համրույր</b>	<b>60%</b>	<b>40%</b>
<b>գրկախառնություն</b>	<b>75%</b>	<b>25%</b>
<b>ուսին կամ մեջքին թվիրկացնել</b>	<b>20%</b>	<b>80%</b>
<b>հալում</b>	<b>75%</b>	<b>25%</b>

Հետազոտելով գեներային տարբերությունները ոչ խոսքային հաղորդակցության մակարդակում՝ կարելի է եզրակացնել, որ գեներային չափազանց կարևոր դեր է կատարում շոշափողական, շարժաբանական և դիմախոսական հաղորդակցության մեջ: Նկարագրելով ցանկացած անհատի վարքագիծը որոշակի իրավիճակում՝ մենք կարող են ճշգրտորեն որոշել, թե գեներային որ տիպին է պատկանում այդ մարդը:

Երկրորդ ենթագլխում (**«Հարախոսքային միջոցները տղամարդկանց և կանանց հոգազացական խոսքում»**) անգիտական «կենցաղային» անեկդոտներում ուսումնասիրության են ենթարկվում հարախոսքային արական և իգական հիմնական միջոցները: Հարախոսքային առանձին միջոցներ գնահատվում են որպես ավելի իգական կամ ավելի արական՝ անկախ կիրառողի իրական սերից: Հարախոսքային հաղորդակցության ժամանակ տեղեկատվությունը հաղորդվում է ծայնային նրերանգների միջոցով:

Անգլիական անեկդոտներում հարախոսքային միջոցներն ավելի հուզառատ օգտագործելը բնորոշ է հենց կանանց: Արտահայտչականության և հույզերի ամենամեծ քանակությունը և տղամարդկանց, և կանանց խոսքում իմմանականում վերաբերում է նրանց բղավելով արված արտահայտություններին: Ընդ որում, տղամարդկանց վարքը բնութագրվում է *to roar, to bellow, to snarl, to grunt, to croak* բայերի օգնությամբ: Բարձրաձայն խոսքը, որպես կանոն, հասուն է, **իմքնագրիությանը**, մինչդեռ ցածրաձայն խոսքը ցույց է տալիս մարդու **գուսացածությունը**: Զայնի բարձրության նկատելի փոփոխությունները զրուցակցի ոյուրագգացությունն ու հուզվածությունն են վկայում: Կանանց հարախոսքային վարքը բնութագրվում է *to scream, to yell* բայերի օգնությամբ:

Հարախոսքային հաղորդակցության բնութագրերից են ծայնի և տոնի նկարագրերը, որոնցով արտասանվել է այս կամ այն բանավոր տեքստը, ընդ որում՝ ամենից հաճախ ուղեկցվելով զայրույթի հույզով (*to groan loudly (S), to say affronted (S), to mutter (S/4), to murmur (S), to splutter (4), to explode (S/4), to hiss (4)*):

Անգլիական անեկդոտներում կանանց համար բնութագրական է **ցածրաձայն, շշուկով խոսելը** (*to whisper*) (տե՛ս *արյուսակ* 7, էջ 28): Տիրության պահին խոսքը ինչում է ավելի ցածրաձայն ու հանդարտ: Շշուկով խոսելը, անկասկած, ունի իր գործարանական նպատակը՝ խոսքին հաղորդել որոշակի մտերմության, խորիդավորության կամ բախսանձանքի երանգներ: Բնական է, որ կանանց խոսքն ուղեկցող հարախոսքային հաղորդակցության ամենահաճախական բաղադրիչներից են *cry; cry one's eyes out; wail; mourn; weep; sob; be in floods of tears* ձևերը, որոնք ավելի հաճախ գործածվում են տիրություն արտահայտելիս: Տղամարդկանց վարքում նույնպես չի բացառվում լաց լինելը (*to cry*), սակայն ավելի հազվադեպ է հանդիպում:

**Smile, giggle, laugh** հարախոսքային հաղորդակցության միջոցները հասուն են թե՝ տղամարդկանց, և թե՝ կանանց, սակայն անգլիական անեկդոտների լեզվական փաստական հարուստ նյութի քննությունը ցույց է տալիս, որ կինը ավելի հաճախ ժայռում է **ուրախության** հուզավիճակում, իսկ տղամարդկանց շուրջերին հաճախակի ժայռ է հայտնվում բացասական հույզերի՝ **նյարդայնության**, **վախի**, **շիոթմունքի** դեպքում: Ինքնազնի ժայռը, հեգնական ժայռը, քնծիծաղը՝ արտահայտված “*simper, grin*” բայերով, լինելով հարախոսքային հաղորդակցության միջոց, հասուն են միայն տղամարդկանց (տե՛ս *արյուսակ* 7, էջ 28):

Դիտարկումները ցույց են տալիս, որ հաղորդակցությունն անընդմեջ անդադար խոսք չէ: Հատ հաճախ բանավոր շփումը ներառում է **լոռություն** և որոշ դեպքերում այն ավելի բարձր է գնահատվում, քան խոսքը: Լոռությունը կանանց դեպքում ավելի բնութագրական է **վախի և զարմանքի** հույզեր արտահայտելիս, տղամարդկանց դեպքում ավելի հաճախ հանդիպում է **զայրույթի, վախի և ուրախության** հույզեր ապրելիս:

Հարախոսքային հաղորդակցության բնութագրերից է նաև **հոգոցը**: Կանանց խոսքում *gasp, sigh* հարախոսքային հաղորդակցության միջոցները ի հայտ են զալիս կանանց **անհանգուտության և հոգմունքի**, իսկ տղամարդկանց դեպքում՝ **շիոթմունքի** հոգավիճակներուն:

Այսպիսով, հարախոսքային հաղորդակցությունն առավել հաճախ հանդիպում է տղամարդկանց վարքագծում **զայրույթի** հոգավիճակում, իսկ կանանց վարքագծում այս բնութագրական է **վախի** ու **տիրության** հոգավիճակներին: **Տիրության** հույզի հարախոսքային արտահայտությունը ավելի տեսանելի է կանանց, քան տղամարդկանց խոսքում:

Հարախոսքային մակարդակում հոգարտահայտչական միջոցների գեներացին առանձնահատկությունների վիճակագրությունը ներկայացվում է այսուսակում:

#### Այսուսակ 7

##### Հարախոսքային միջոցները կանանց և տղամարդկանց խոսքում

	Կանայք	Տղամարդիկ
<i>շշուկ, փսխոց, քչիչոց</i>	85%	15%
<i>բղավոց, գորգոռոց, գորումգոյցուն, գրգռոց</i>	40%	60%
<i>լաց</i>	70%	30%
<i>ծիծաղ, ժայխ, քրքոց, կչկոց</i>	75%	25%
<i>քմծիծաղ, խնորոք</i>	25%	75%
<i>դադար, լրություն, անխոսություն</i>	40%	60%
<i>հոգոց</i>	65%	35%

Այսպիսով, անգիտական «կենցաղային» անեկդոտների լեզվական փաստական նյութի Վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու, որ խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային մակարդակներում գոյություն ունեն գեներացին տարբերություններ: Այդ տարբերությունները բացատրվում են հետևյալ պատճառներով. կանանց և տղամարդկանց կազմախոսական կառուցվածքի և արտաքին տեսքի ակնհայտ տարբերությամբ, հանրային տարրեր դեռքի կատարումով և վարդի ու մտածողության հնքնատիկ հակվածությամբ:

Անգիտական երգիծական խոսույթում, մասնավորապես «կենցաղային» անեկդոտներում, կանանց և տղամարդկանց կարծրատիպերի, հույզերի այս կամ այն առաջնայնության և դրանց լեզվական արտահայտչածների մեր ուսումնասիրության արդյունքում հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Հասարակության հանրամշակութային առանձնահատկությունները, ազգային խառնվածքի և հոգեկերտվածքի յուրահատկությունները, էթնոմշակութային և գեներացին կարծրատիպերը անխուսափելիորեն դրսենորվում են տղամարդկանց և կանանց խոսքի տարրեր մակարդակներում:

Ընդ որում, գենդերային կարծրատիպերի հանրամշակութային բնութագիրը անգլիական անեկուտներում բավականին լայն է ու բազմազան՝ **ամուսնական անհավատարմություն (20%), հիմարություն (20%), արտաքին տեսք (15%), շատախոսություն (10%), հարբեցողություն (15%), փեսա-զոքանչ հարաբերություններ (20%)**:

2. Գենդերային տարբերությունները դրսերվում են **խոսքային մակարդակում հատկապես բարամիավորմերով և շարադիուսական որոշակի կառուցներով:**

• Ըստ վիճակագրական տվյալների անգլիացի տղամարդիկ իրենց խոսքում օգտագործում են ավելի մեծ թվով **այժմակավորող-զնահատողական բառեր**, քան կանայք (**Կ-30%, Տ-70%**): Անգլիացի տղամարդը կնոջը զնահատելիս կիրառում է վերջինիս արտաքինը որակող բառային նիշավորներ՝ ընդ որում այս որակումները չեն հակասում անգլիական հասարակության մեջ ընդունված գենդերային կարծրատիպերին: Տղամարդկանց հասցեին զնահատականներ տալիս կանայք օգտագործում են բառային այնպիսի միավորներ, որոնք արտահայտվում են տղամարդկանց **արտաքին տեսքը, կազմվածքը, խելքը, բարեհոգությունը, ազնվությունը, մեծահոգությունը** նշող բառերով: Բացասական գնահատականի դեպքում կնոջ խոսքում ի հայտ է գալիս տղամարդկանց ուղղված զգակի քանակությամբ հուզագնահատողական բառապաշար, որն ավելի հաճախ ընդգծում է տղամարդու խոսքի և վարքագծի բացասական հատկանիշները **անմտությունը, թռվամտությունը, կոպությունը, դաժանությունը, եսասիրությունը, ամկայունությունը հարաբերություններում**:

• Տղամարդկանց խոսքում ի հայտ է գալիս **գրեհկախոսության, անպարկծութ բառերի ու արտահայտությունների օգտագործման** հակում (**Կ-15%, Տ-85%**): Բնորոշ է նաև խոսքի դիտավորյալ գրեհկացման միտունմը:

• Կանանց խոսքում առկա են **ուժգնացնող բառեր**, որոնք արտահայտում են տարբեր հուզավիճակներ (**Կ-60%, Տ-40%**):

• Գենդերային ուղղվածության տարբերությունները դրսերվում են նաև տարբեր **ձայնարկությունների** կիրառությամբ: Ընդ որում կանանց խոսքում դրանք գերակշռում են (**Կ-55%, Տ-45%**): Տղամարդիկ օգտագործում են ձայնարկություններ ուրախության, զարմանքի, զայրութի, տիաճության, բավականության և ատելության հուզավիճակներում: **Վախի, թախի, հիացնութի, զղջման և հավանության հույզերը** ըստ վիճակագրական տվյալների առավելապես բնորոշ են կանանց խոսքին:

• Տղամարդու և կնոջ հուզագացական վարքով պայմանավորված գենդերային տարբերությունները շարադիուսական մակարդակում դրսերվում են **գեղչված կառուցների միջոցով (Կ-30%, Տ-70%)**, որոնք ըստ էության ուժգին հույզի ազդեցությամբ լեզվական նորմատիվ ձևանմուշների կազմալուծման արդյունք են:

• Բնութագրական է նաև **անավարտ նախադասությունների (Կ-60%, S-40%), փոխակերպված կառուցմների (Կ-65%, S-35%), կրկնությունների (Կ-20%, S-80%)** գործածությունը, ընդ որում, տղամարդիկ կրկնությունը զլիսավորապես օգտագործում են որպես դադար՝ երկխոսության հաջորդ փուլը մտածելու համար, իսկ կանանց խոսքում կրկնություն ծնող պատճառներից են **հոլովոնքը և ուրախությունը:** Հուզական ապրումների առկայության դեպքում կանանց խոսքը աչքի է ընկնում նաև **բացականչական նախադասությունների (Կ-70%, S-30%)** կիրառությամբ:

3. Գենդերային կարծրատիպերը էականորեն ազդում են նաև մարդու ոչ խոսքային վարքի վրա: Այդ ազդեցությունը արտահայտվում է **շարժաբանության (ժեստեր, դիմախոսություն)** և **շոշափողական (ծեռքսեղմում, համրույր, գրկախառնություն, հպում, ուսիրն կամ մեջքին թիթիացնել)** միջոցներով, որոնք հատուկ են թե մեկ, թե մյուս մերին:

• Կանանց ոչ խոսքային վարքի համար ավելի նշանակալի են **վախի, տիրության, ուրախության, զայրույթի, զարմանքի, տիհածության հոլովերը,** որոնք հատկապես դրսևորվում են հաղորդակցության ժեստային բաղադրիչների միջոցով, իսկ հոլովերի դրսևորման դիմախոսության ձևերը ավելի հաճախ օգտագործվում են **ուրախության** պարագայում: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ **դիմախոսական (Կ-60%, S-40%)** և **ժեստային (Կ-55%, S-45%)** հուզապրումները առհասարակ հատուկ են կնոջ վարքագին, որի հիման վրա կարելի է ենթադրել, որ կանայք ավելի լավ են տիրապետում ժեստերին ու դիմախոսությանը, մինչդեռ տղամարդիկ բացասական հուզական արձագանքներ արտահայտում են զլիսավորապես հաղորդակցության ոչ խոսքային բաղադրիչների դիմախոսության տիպերի օգնությամբ:

• Գենդերային տարբերություններ նկատվում են նաև **շոշափողական վարքում:** **Ամուր ծեռքսեղմունքը,** որը առավել հաճախ տղամարդն է նախաձեռնում (**Կ-30%, S-70%**), արականության բնորոշ հատկանիշ է, որի միջոցով նրանք ցանկանում են շեշտել իրենց ուժը: **Հպումը, շոյելը (Կ-75%, S-25%), համրութելը (Կ-60%, S-40%), գրկախառնությունը (Կ-75%, S-25%)** ավելի հաճախ նկատվում են թոյլ սերի ներկայացուցիչների վարքում: **Ուսին կամ մեջքին թիթիացնելը (Կ-20%, S-80%),** որը բարեկամական վերաբերմունքի, խրախուսման արտահայտություն է հիմնականում բնորոշ է տղամարդկանց:

4. Անգլիական «կենցաղային» անեկոդոտներում տեղ են գտնել նաև **հաղորդակցության հարախոսքային տարրեր:** Այս միջոցների օգտագործումը առավելապես բնորոշ է կանանց խոսքին: Զայնի օգնությամբ հեշտությամբ հաղորդվում են այնպիսի հիմնական հոլովեր և հուզավիճակներ, ինչպիսիք են **վախը, զայրույթը, ուրախությունը, թախիծը, զարմանքը, բարյացակամությունը, անհանգստությունը, ինքնավստահությունը:** Տղամարդկանց վարքում հարախոսքային տարրերի (**բղավոց, գոռզոոց, գոռումգոյցուն, գրգոց**) ամենամեծ քանակը ի հայտ է գալիս **զայրույթի** հոլոյն արտահայտելիս, որը

հաստատվում է նաև որոշակի ժեստային միջոցների կիրառմամբ: Որոշ հարախոսքային միջոցները գնահատվում են որպես կանաց համար առավել բնորոշ (լաց Կ-70%, S -30%; շշուկ, փափոց, քչիչոց Կ-85%, S -15%; ժիճաղ, ծախտ, քրքջոց, կչկչոց Կ-75%, S -25%; հոգոց Կ-65%, S -35%), իսկ որոշները տղամարդկանց (բրավոց, գորգորոց, գորումգոյցուն, գրգորց Կ-40%, S -60%; քմծիճաղ, խնդրութ Կ-25%, S -75%; դադար, լուութուն, անխոսություն Կ-40%, S -60%):

5. Ուսումնասիրությունը փաստում է, որ անգլիական երգիծական խոսույթում խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային հուզարտահայտչական որոշակիչների քանակը, որն ըստ էլույան արտահայտում է հաղորդակցողների հուզավիճակը, գլխավորապես պայմանավորված է *զայրույթի* հույզի առկայությամբ (գերակայում է տղամարդկանց խոսքային վարքագծում) և *ուրախության* հույզի առկայությամբ (գերակայում է կանանց խոսքային վարքագծում):

Այսպիսով, մեր հետազոտության արդյունքները թույլ են տալիս երգիծական խոսույթում («կենցաղային» անեկոդոտներում) տարբերակել տարասեռ հաղորդակցողների խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային վարքագծերի տարբերությունները՝ դրանով իսկ հաստատելով ոչ միայն հանրույթի ավանդական բաժնանումը երկու տարածքների՝ տղամարդկանց և կանանց, այլև դրանցում սեռադերային այն կարծրատիպերի արտացոլումը, որոնք բավականին հաստատուն ամրագրված են հասարակական և լեզվական գիտակցության մեջ:

Աստենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

#### Ա. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Гендерные асимметрии и стереотипы в юмористическом дискурсе Saarbrücken, Deutschland: Palmarium Academic Publishing OmniScriptum GmbH&Co.KG, 2015, 77с.

#### Բ. ՀՈՂՎԱԾՆԵՐ

2. Gender Differences in conversational coherence. // Օսար լեզուները Հայաստանում: Գիտամեթոդական հանդես, Երևան, 2008, էջ 3-10:

3. Гендерность в английской паремиологии и фразеологии. // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում: Գիտ. հոդվածների ժողովածու, N 2, Երևան, 2010, էջ 49-52, (համահեղ. Ս. Ք. Գասպարյան):

4. **Лингвистические аспекты гендерных стереотипов.** //Գիտ. հոդվածների ժողովածու «Լրատու», N 1(10), Ստեղծանակերտ, 2011, Էջ 124-129:

5. **Лингвокультурологические аспекты гендерных отношений (на материале армянского, русского и английского языков).**// Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում: Գիտ. հոդվածների ժողովածու, N 3, Երևան, 2011, Էջ 175-180:

6. **Этнокультурные особенности гендерных стереотипов в текстах английских и армянских анекдотов.** // Օստար լեզուները բարձրագույն դպրոցում: Գիտ. աշխատությունների ժողովածու, N 12, Երևան, 2011, Էջ 177-186:

7. **Gender Roles in Children's Literature.** // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում: Գիտ. հոդվածների ժողովածու, N 4, Երևան, 2012, Էջ 139-143:

8. **Некоторые различия экстралингвистического характера в речевой деятельности мужчин и женщин.** // Գիրք թարգմանչաց, «Աստղիկ», N 22-23, Երևան, 2012-2013, Էջ 229-233:

9. **Гендерные особенности оценочномаркированной лексики в английских анекдотах.** // Օստար լեզուները բարձրագույն դպրոցում: Գիտ. աշխատությունների ժողովածու N 15, Երևան, 2013, Էջ 158-165:

10. **Гендерные стереотипы женской красоты в английских анекдотах** // Օստար լեզուները բարձրագույն դպրոցում: Գիտ. աշխատությունների ժողովածու, N 15, Երևան, 2013, Էջ 165-176:

11. **Реализация гендерной агрессии в жанре анекдота.** // Գիրք թարգմանչաց, «Աստղիկ» N24, Երևան, 2013-2014, Էջ.236-242:

12. **Социальные роли мужчин и женщин в разных культурах.** // Լեզուն և գրականությունը գիտ. իմացության ժամանակակից հարացույցում: Գիտ. հոդվածների ժողովածու, N 5, Երևան, 2013, Էջ 106-112:

13. **Тема “измены” в английских анекдотах.**// Լեզուն և գրականությունը գիտ. իմացության ժամանակակից հարացույցում: Գիտ. հոդվածների ժողովածու, N 5, Երևան, 2013, Էջ 113-117:

14. **Социокультурный анализ гендерных стереотипов английских и армянских анекдотов.** // Հայագիտական հանդես N3-4 (23-24) Խ.Արովյանի անվան հայկական պետ. մանկավարժական համալսարան, Երևան, 2013, Էջ 205-213:

15. **Синтаксический уровень эмоциональной речи мужчин и женщин в английских анекдотах.**//“ Studia Philologica” Збірник наукових праць, Випуск 2,Київ, 2013, с.19-25, (համահետ.՝ U. Քասպարյան):

16. **Գենդերը տղիակ մշակութային կեանքում.** // «Գարուն» ամսագիր N264,volume 22,Ավագորալիա, Սիդնեյ, 2014,Էջ 30-31:

17. **Gender Stereotypes in Advertising.** // Armenia Folia Anglistika, International journal of English studies 1(12), Yerevan, 2014, Էջ 82-87:

18. "Կարծրատիպ" հասկացության ծագումն ու մեկնարանությունը, //Օտար լեզուները բարձրագույն դպրոցում: Գիտական հանդես N2(17), Երևան, 2014, էջ 38-46:
19. Գենդերային կարծրատիպերի արտացոլումն անգլիական «կենցաղային» անելքուներում. // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում: Գիտական հանդես N2(17), Երևան, 2014, էջ 30-38:
20. Гендерные различия языковой репрезентации в юмористическом дискурсе (на материале английских "бытовых" анекдотов). // Альманахах современной науки и образования. Тамбов: Грамота, 2014, № 12 (90), с.52-55.
21. Гендерные стереотипы мужской и женской глупости в английских "бытовых" анекдотах. // "Studia Philologica" Збірник наукових праць, Випуск 3. Київ, 2014, с.119-122.
22. Речевое поведение мужчин в юмористическом дискурсе (на материале английских "бытовых" анекдотов).//Филологические науки. Вопросы теории и практики Тамбов: Грамота, 2015. № 5 (47): в 2-х ч. Ч. II, с.76-79.
23. Верbalная и неверbalная агрессия в юмористическом дискурсе (на материале английских, русских и армянских "бытовых" анекдотов).//Филологические науки. Вопросы теории и практики. Тамбов: Грамота, 2015. № 4(46): в 3-х ч. Ч. II, с. 94-97.
24. Гендерные различия в тактильном поведении (на материале английских "бытовых" анекдотов).// Филологические науки. Вопросы теории и практики. Тамбов: Грамота, 2015, № 3 (45): в 3-х ч. Ч. III, с.88-91.
25. Гендерный аспект паравербальной коммуникации (на материале английских "бытовых" анекдотов).// Филологические науки. Вопросы теории и практики. Тамбов: Грамота, 2015, № 2 (44): в 2-х ч. Ч. II, с.109-112.
26. Гендерные особенности эмоциональной речи мужчин и женщин в английских "бытовых" анекдотах.// Լեզուն և գրականությունը գիտ. իմացության ժամանակակից հարացույցում: Գիտ. հոդվածների ժողովածու, N 6, Երևան, 2015, էջ 130-136:
27. Гендерные различия в невербальной коммуникации (на материале английских "бытовых" анекдотов). // Լեզուն և գրականությունը գիտ. իմացության ժամանակակից հարացույցում: Գիտ. հոդվածների ժողովածու N 6, Երևան, 2015, էջ 120-129, (համահեղ. Ս.Ք. Գասպարյան):
28. Жанровые признаки юмористического дискурса. // Գիրք բարգմանչաց, «Աստղիկ», N26, Երևան, 2015, էջ.93-105:
29. Gender and Disparaging Humor. // Armenia Folia Anglistika, International journal of English studies 2(14), Yerevan, 2015, p.25-32:

#### **Գ. ԹԵԶԻՍՆԵՐ**

30. **Gender Differences in conversational coherence.** //AASE- Language, Literature & Art in cross-Cultural Contexts, Second international conference, Yerevan, 16-19 October 2007, p.136.
31. **Экспрессивность в мужской и женской речи.** // Օստար լեզուներ և գրականություն (տեսություն և պրակտիկա), Միջազգային գիտաժողով նվիրված Երևանի պետական համալսարանի հիմնադրման 90 ամյակին, Երևան,փետրվարի 26-27, 2009, էջ 48-49:
32. **Gender roles in Children's Literature.** //AASE- Language, Literature & Art in cross-Cultural Contexts, Third international conference, Yerevan, 4-8 October, 2011, p.91.
33. **Гендерные когнитивные стереотипы в печатных СМИ.** //Матеріали IV міжнародної наукової конференції «Когнітивно-прагматичні дослідження професійних дискурсів». Харків : Харківський національний університет імені В.Н. Каразіна, 2014, с.22-25, (համահեղ.՝ U.Ք. Գասպարյան):

**Князян Анна Тариеловна**

**Гендерный аспект английского юмористического дискурса  
(языковые и социокультурные проявления)**

**РЕЗЮМЕ**

В данной диссертационной работе исследуются гендерные различия коммуникативной личности, отраженные в английском юмористическом дискурсе.

**Материалом** исследования социокультурных и языковых особенностей гендерных стереотипов послужили английские анекдоты бытовой тематики. Нами было проанализировано более 1000 английских “бытовых” анекдотов.

**Цель настоящего** исследования состоит в выявлении гендерных особенностей лингвистического выражения эмоций (*радости, грусти, страха, гнева и удивления*), которые отражены в английском юмористическом дискурсе. Рассмотрены также стереотипы, отражающие обобщенные суждения о качествах и свойствах, которые присущи мужчинам и женщинам, и различия, существующие между ними.

**Актуальность** данной диссертационной работы связана с тем, что особенно в последние годы, термин “гендер” еще более широко обсуждается в научных и общественных кругах, в том числе и в Армении. Гармоничное развитие гендерных отношений рассматривается как часть общего процесса демократизации. Гендер, гендерные отношения, гендерная культура присутствуют в современных процессах конструирования общества и общественных отношений. В результате социально-экономических и политических изменений, происходящих в мире углубляется неравенство гендерных отношений во всех сферах общественной жизни: политической, психологической, экономической, языковой и т.д. Таким образом, исследование гендерных различий становится еще более актуальным, поскольку гендерное равенство является непременным условием для развития всех сторон общественной жизни.

**Научная новизна** исследования заключается в проведении лингвистического исследования на стыке трех дисциплин: социокультурологии, структурной и гендерной лингвистики. В современной лингвогендерологии прежде не проводились исследования гендерных различий на материале английского юмористического дискурса. **Новым** также является рассмотрение вербальных, невербальных и паравербальных компонентов коммуникации в английском юмористическом дискурсе.

В **теоретическом** плане данное диссертационное исследование вносит определенный вклад в углублении и систематизации научных представлений о гендерных стереотипах. Гендерный аспект вносит ясность в понимании того, как

функционируют различные вербальные, невербальные и паравербальные средства в зависимости от социокультурных характеристики.

**Практическая значимость исследования.** Результаты данной диссертационной работы представляют интерес для социолингвистики, социокультурологии, психолингвистики, прагмалингвистики, конфликтологии. Полученные результаты работы могут быть использованы в практике преподавания ряда дисциплин: лингвогендерологии, межкультурной коммуникации, психологии, конфликтологии.

Цель и задачи определили **структуру работы**, которая состоит из введения, семи глав, заключения и библиографии.

**В первой главе** отражены разные подходы к пониманию и изучению гендера, представлены различные теории из области гендерных исследований.

**В второй главе** исследуется понятие стереотипа, как социокультурное и лингвистическое явление. Рассмотрены виды, свойства и функции стереотипов.

**В третьей главе** рассматриваются язык и культура, выявляются понятия национально-культурных и социо-культурных стереотипов. исследуется категория ценности.

**Четвертая глава** детально освещает приемы и категории создания юмористического дискурса.

**В пятой главе** исследуются социокультурные особенности английских "бытовых" анекдотов, раскрывается взаимосвязь языка, мышления, культуры, анализируются гендерные стереотипы в английских "бытовых" анекдотах.

**В шестой главе** исследуются языковые особенности (*оценочно-маркированная лексика, грубая лексика, эмоциональные интенсификаторы, междометия, эллиптические и инвертированные конструкции, неполные и восклицательные предложения, повтор*) эмоционального уровня речи мужчин и женщин, объясняются психофизиологические различия их эмотивного поведения.

**В седьмой главе** рассматриваются гендерные различия способов выражения в неверbalной (*кинетические средства – жесты, мимика; та克斯ика-рукопожатие, поцелуй, объятие, дотрагивание, поглаживание, похлопывание по спине или плечу*) и паравербальной коммуникации (*высота голоса, плач, молчание смех, усмешка, вздох*).

Таким образом, наше исследование может способствовать пониманию эмоционального видения мира коммуникантами и отражения его в английском юмористическом дискурсе в зависимости от гендерной принадлежности.

**Anna T. Knyazyan**  
**Gender Aspect of English Humorous Discourse**  
**(linguistic and socio-cultural manifestations)**

**Summary**

The dissertation explores socio-cultural and linguistic characteristics of gender stereotypes and analyzes gender differences in male and female speech reflected in English humorous discourse.

**The data for study** is English anecdotes. For the purpose of this study more than one thousand English "everyday" anecdotes have been analyzed.

**The purpose of this study** is to identify gender differences in verbal, non-verbal and paraverbal communication in English "everyday" anecdotes.

**The topicality of the dissertation** is related to the fact that especially in recent years, the term "gender" has been widely discussed in Armenia and elsewhere as the harmonious development of gender relations is considered as a part of the overall process of democratization. Gender, gender relations, gender culture are present in contemporary processes of constructing society and social relations. Because of the socio-economic and political changes occurring in the world the inequality of gender relations deepens in all spheres of public life: political, psychological, economic, linguistic, etc. Thus, the study of gender differences is becoming increasingly important because gender equality is a precondition for the development of all aspects of social life.

**The scientific novelty of the research** consists in conducting linguistic research at the intersection of three disciplines: socio-cultural, structural and gender linguistics. The novelty of the work lies in the study of gender differences in verbal, non-verbal and paraverbal communication in English humorous discourse. Gender differences have also been studied with regards to the emotive features in English anecdotes.

**The practical significance of the work** lies in the fact that the results are of great interest to sociolinguistics, gender linguistics, psycholinguistics, linguoculture, socioculture and conflictology.

The purpose and objectives determined the structure of the work, which consists of an introduction, seven chapters, conclusion and bibliography.

**Chapter One** provides an overview of various approaches to the understanding and study of gender and language.

**Chapter Two** is devoted to gender stereotypes, which are the most important types of schemes used for orientation in the social environment.

**Chapter Three** considers the fact of the correlation of language and culture, reveals the notion of cultural identity, national character and the category of value.

**Chapter Four** is dedicated to the research of genre features of humorous discourse. Particular attention is paid to linguistic, cultural and structural properties of anecdotes.

**Chapter Five** studies how gender stereotypical ideas about men and women are manifested in English anecdotes.

**Chapter Six** highlights the lexical and syntactic aspects of males' and females' emotional speech in English "everyday" anecdotes. The most frequently used lexical means that create the appropriate humorous effect contributing to vivid originality in anecdotes and attract the listener's attention are *evaluative lexis, invective lexical units, intensifiers and interjections* used by males and females to emphasize a particular word, phrase and idea. The following *syntactic means* have been studied in male and female speeches: *elliptical and incomplete constructions, inversions, exclamatory sentences and repetitions*.

**Chapter Seven** examines the elements of non-verbal and paraverbal communication in humorous discourse. In English anecdotes the following means of *non-verbal communication* have been studied: *kinesics (mimics and gestures) and tactile behaviour (handshake, kiss, embrace, pat, touch and stroke)*. Our research suggests that in English anecdotes women convey the intensity of their feelings with the help of facial expressions.

In English anecdotes the following male and female paraverbal peculiarities have been analyzed: *voice volume, cry, silence, scream, smile, giggle, laughter, simper, sigh*. Women manifest paraverbal expression of the emotion of sadness more frequently than men do. For male behaviour paraverbal communication is typical in the emotional situation of anger.

Thus, our study may contribute to understanding different emotional visions of the world and their reflection in male and female communication.

